



F O R E U S O

Կ Ա Ս

ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Յուզիչ ՏՐԱՄ 5 արար

ՅԱԿՈԲ ԱԲՐՈՅԱՆԵՍ
ՔՐԱՎԱՃՈՒ-ՀՐԱՑՈՒՐՈ
Shrphim. Վարժակոյ
Կ. ՊՈԼԻԱ, ՊԱՌԱՆԻ ԲԵՐԵՒՅԻ

Հայերէնի վերտանց Ա. ՀԱՅԵԿԱԶՆ

Տպագրութիւն ՅԱԿՈԲ ԱԲՐՈՅԱՆԵՍ
Անգարա հատեսկի, Ռեփս Էմենի խան

1932

BERKELEY BOOK CO.
317 WASHINGTON ST.
BOSTON, MASS.

25 MAR 2013

10873



Ա Ն Զ Ե Ր Ը

ՔՈՐՐԱԾՈ	դատապարտեալ մը
ԱՐԲԻՔԾ ԲԱԼՄԻՔԻ	բժիշկ
ՃԻԱՆԻՆԾ	վաճական
ՏՕՆ ՖԷՐՆԱՆՏՕ	ձիանինոյի բեռորդին
ՌՈԶԱԼԻԱ	Քօրրատոյի կինը
ԷՄՄՈ	» աղջիկը
ԱԿԱԾՈ	բժիշկին ծառան
ՔԱՅԹԱՆՈ	վաճին ծառան

ՔՈՐՐԱԾՈ

ԱՌԱՋԻՆ Ա.Բ.Օ.Ր

Բժիշկին տունը սրահ մը, զարդարուն եւ լաւ
կահաւարուած.— մէջտեղը մեծ դուռ մը.—
կողմնակի երեք դուռներ:

ՏԵՍԻԼ Ա.

ՏՕՆ ՖԷՐՆԱՆՏՕ եի ԱԿԱԾՈ

ՖԷՐՆ.— Այո, Արրիքօն տեսնելուս համար շատ
ուրախ եմ: Ո՞վ է այդ օտարական կինը, անունը ի՞նչ
է արգեօք: Մօրեզմօրս ըստծին նայելով, բժիշկը Քա-
թանեայէն հոս բերեր է այդ կինը... ամէն պարագայի
պէտք է հասկնամ այդ կնոջ ո՞վ ըլլալը:

ԱԿԱԾՈ.— Անոր ո՞վ ըլլալը չեմ գիտեր, անձանօթ
կին մըն է, անունն ալ Ռօզալիս է....

ՖԷՐՆ.— Սիկիլիոյ մէջ ասանկ Ռօզալիներու շատ
կը հանդիպիք, ես լաւ կը ճանչնամ անոնցմէ շատե-
րը... հիմա ըսէ տեսնենք, այդ Ռօզալիան աղջի՞կ է
թէ կին....



1082 - 2000

ԱԿԱԾԱ. — Ո՞վ գիտէ... ևս ալ անոր մասին աեւ
դեկոթիւն չունիմ:

ՖԵՐՆ. — Բաել է գուք ալ տեղեկութիւն չունիք...
բայց շիտակը, գեղեցիկ կին մըն է բարեկամ, արդէն
աւելորդ է ձեզմէ բացատրութիւն պահանջել ասանկ
դործերու մասին:

ԱԿԱԾԱ. — Զեր միտքը չկրցի հասկնալ:

ՖԵՐՆ. — Ոչինչ... ամբողջ ուժս պիտի սպառեմ,
այս կնոջ մասին տեղեկութիւն մը առնելու համար, ու
բովհետեւ ինքնութիւնը անծանօթ այդ կինը կասկա-
ծելի երեցած է մօրելլօրս... հովիւի մը պէս, ամե-
նուն պատուին, բարոյականին և նիստ ու կացին
պաշտպան կանգնելու պարտաւոր է... գալով այդ
Ռօղալիային... լսածիս համաձայն, ամենուն կասկածը
հրաւիրած է իր վրայ...:

ԱԿԱԾԱ. — Իրաւ որ, խայտառակութիւնը չափ ու
սահման չունի հոս. հիմա հասկցաք որ այս անը մէջ
չմնալու իրաւունք ունիմ եղեք:

ՖԵՐՆ. — Բայց ո՞վ կրնայ արգելք ըլլալ այս տու-
նէն ձեր մեկնելուն:

ԱԿԱԾԱ. — Իրաւունք ունիք, բարեկամ, բայց
ծիանիօին հրամանով ստիպուած եմ բժիշկին քովէն
վայրկեան մը իսկ չբաժնուելու, անիկա իմ ընկերս ու
խորհրդակիցս եղած է:

ՖԵՐՆ. — Օ... ի՞նչ զժբախտ պատահար, շիտակը
ծիծաղելի պատասխան մը. ըսել է որ, բժիշկին վիճա-
կէն չախորժիր, անոր վրայ համարում չունի բնաւ...:

ԱԿԱԾԱ. — Զեմ գիտեր...

ՖԵՐՆ. — Անկէ խորշելու և անկէ կասկածելու
պատճառերը ի՞նչ են արդեօք, պիտի ջանամ անպատ-
ճառ հասկնալ...:

ԱԿԱԾԱ. — Ինքրեմ, բարեկամ, վերջացնենք այս
խօսքերը. որովհետեւ նեղութիւն կը պատճառէ ինձի:

ՖԵՐՆ. — Ասանկ պարագաներու մէջ գգուշու-
թեամբ վարուելու է անպատճառ, խելացի շարժե-
լու է...

ԱԿԱԾԱ. — Թոյլ առելքը որ մեկնիմ, որովհետեւ
շատ գործեր ունիմ:

ՖԵՐՆ. — Սպասարկէք, ձեզի հարցնելիք բաներ ու-
նիմ, և հարցումներու ձզըրիտ պատասխանները կ'ու-
զեմ ձենէ: Խնդրեմ, ուսերնիդ թօթուելով, մի՛ խու-
սափիք պատասխանելէ, և ձշմարտութիւնը յայտնեցէք
ինձի... բժիշկը ամուսնացած է...:

ԱԿԱԾԱ. — Այո՛, պարոն, ամուսնացած է. բայց
կինը շատոնց մեռած է.

ՖԵՐՆ. — Ո՞ւր մեռած է...:

ԱԿԱԾԱ. — Ասկէ երկու տարի առաջ, այսինքն
բժիշկը իր աղջկան հետ Քաթանիտ չփոխազրուած՝ այս
տունը մեռած է...:

ՖԵՐՆ. — Քաթանիտ փոխազրուած... ըսել է ան-
կէ մեկնելէս յետոյ գացած է հոն. եթէ ոչ՝ անպատ-
ճառ իրարու պիտի հանդիպէինք... երկրո՞րդ անգամ
ամուսնացած է...:

ԱԿԱԾԱ. — Զեմ գիտեր:

ՖԵՐՆ. — Այո՛, չեմ գիտերներուդ վերջը չպիտի
դայ:

ԱԿԱԾԱ. — Ի՞նչպէս պատասխանեմ թէ ես գիտեմ
այն բաները, որոնց տեղեւակ չեմ...:

ՖԵՐՆ. — Ամէն բանէ տեղեկութիւն ունենալնիդ
շատ լաւ գիտեմ, լսածիս նայելով, բժիշկը կրկին ա-
մուսնացած է և զուք ձշմարտութիւնը ինձմէ ծածկե-
լու կ'աշխատիք: Ռօղալիին հետ ամուսնացած է ան...:

ԱԿԱԾԱ. — Բայց բարեկամն...:

ՖԵՐՆ. — Զիս կը նեղացնես լուսթիւն պահելովդ,
մակաւ կամկածներս կ'աւելինան մտքիս մէջ...

ԱԿԱԾԱ. — Իրեն հետ ահսնուելու կը փափաքի՞ք,
ահա ինքն ալ կուգայ:

Ֆէ՛ՐՆ. — Հեռուեն աղէկ չի տեսնուիր, կարծեմ
թէ միասին աղջիկ մը կայ... ո՞վ է... ի՞ր աղջիկն
է...:

ԱԿԱՏԱ. — Եսմ գիտեր...:

Ֆէ՛ՐՆ. — Ես խորհրդաւոր բաներէն շատ կ'ախոր-
ժիմ, և փափաք կը զգամ ամէն բան իմանալ:

ԱԿԱՏԱ. — Բայց, բարեկամս, վստահ եղէք որ չը
պիտի կրնաք հասնիլ ձեր փափաքին...:

Ֆէ՛ՐՆ. — Ինչ որ է... սպասէ՛, հոս կուգան, (եր-
կուքն ալ բեմին մէկ անկիւնը կը քաշուին)

ՏԵՍԻԼ Բ.

Առաջինները, ՈՒԶԱԼԻԱ. և ԷՄՄԱ.

ՈՒԶԱ. — (Էմմային ձեռքէն բոնած) սիրելի էմ-
մաս, այգի երթալ կ'ուզե՞ս, հոն ծաղիկներ կրնանք
ժողվել:

ԷՄՄԱ. — Ամենայն սիրով... հոն ծաղկեփունջ մը
պիտի պատրաստեմ և հօրս պիտի նուիրեմ:

ՈՒԶԱ. — Երթանք, սիրելի աղջիկս... այգի եր-
թանք (մինչեւ գուռը կ'երթան):

Ֆէ՛ՐՆ. — (Անոնց առջեւ ելելով) ներողութիւն...
արդեօք ինձի...:

ԷՄՄԱ. — (Յած ձայնով) անծանօթ պարոն մը...
բայց ո՞վ է...:

ՈՒԶԱ. — (Ուշադրութեամբ տօն Ֆէ՛րնանտօն դի-
տելով) այո՛... կը յիշեմ տեղ մը հանդիպում մը ունե-
նալս... բայց ներողութիւն, պարոն... ինձի կ'սպաս-
ան...:

Ֆէ՛ՐՆ. — Սիրելի Տիկին, վայրկեան մը շնորհ ը-
րէք... այո՛, հիմա յիշեցի... Քաթանիայի մէջ իրաւ-
ուու հետ տեսնուեցանք:

ՈՒԶԱ. — Ես այդպիսի գէպք մը չեմ յիշեր, պարոն:

Ֆէ՛ՐՆ. — Զեր հօրը կ'այցելէի, միշտ: Տօն Ֆէ՛ր-
նանտօն չէք ճանչնար միթէ. շատ կը ցաւիմ, տիկին,
ձեր հայրը իմ ամենամտերիմ բարեկամներէս մէկն էր...

ՈՒԶԱ. — Կարելի է մոռցած ըլլամ... որովհետեւ
իմ հօրս տուած ձեր այցելութիւնը չեմ յիշեր, անկէ
ի վեր շատ տարիներ անցած են.

Ֆէ՛ՐՆ. — Այո, անկէ ի վեր տասնըչորս տարի ան-
ցած է:

ՈՒԶԱ. — Տասնը չո՛րս տարի...:

Ֆէ՛ՐՆ. — Այո՛, միշտ ատանըչորս տարի... այս
սիրուն օրիորդը ձեր աղջիկն է...:

ԷՄՄԱ. — Ո՛չ, պարոն... ես մայրս չեմ ճանչնար,
անիկա տեսնելու երջանկութիւնը չեմ ունեցած, իսկզ
մայրս զիս աշխարհ բերելէն յետոյ մեռած է...:

Ֆէ՛ՐՆ. — Ըսել է, զուք տօքթէօր բալմիէրին աղջ
ջիկն չք:

ԷՄՄԱ. — Այո՛, պարոն (Ակատա կը մեկնի):

ՈՒԶԱ. — Սիրելի էմմա, եթէ կ'ուզէք, գուք գա-
ցէք ձեր հօրը նուիրելիք փոնջը կապեցէք, ես ալ քիչ
մը տօն Ֆէ՛րնանտօյի հետ տեսնուիմ.

ԷՄՄԱ. — Շատ աղէկ, սիրելի տիկին, հիմակու-
հիմա մնաք բարով...: Ցտեսութիւն պարոն Ֆէ՛րնան-
տօ... (Էմմա կ'երթայ):

Ֆէ՛ՐՆ. — Շիտակը ըսելով, տիկին, ձեզի անհան-
դիստ ընելուս համար ներողութիւն կը խնդրեմ, օրիոր-
դին հոս գտնուիլը մեր տեսակցութեան արգելք մը չէք
կրնար ըլլալ, բայց կրնայ ըլլալ որ ձեր ըսելիքները
գաղանիք մը ըլլան...:

ՈՒԶԱ. — Անցեալիս մասին օրիորդը ո՛և է տեղե-
կութիւն չունի, բարեկամս: Իմ կեանքիս ելեւէջները
շատ ցաւալի և տիսուր ամպերով ծածկուած՝ են, ահա
ինչո՞ւ չեմ ուզեր որ էմման անոնցմէ տեղեկութիւն

ունենայ և սիրտը ձմլուի, մօրմէ մը առելի կը սիրէ զիս....

Ֆէ՛ԲՆ. Իրաւունք ունիք, տիկին... կարելի է ամուսին ունենալիդ չգիտեր, բայց կարծեմ թէ ձեր ամուսինը շատոնց մեռած է:

ՈՒԶԱ. — Եթէ տակաւին կ'ապրի:

Ֆէ՛ԲՆ. — Լուր ունիք անկէ... հիմա ո՞ւր է... խօսեցէք, տիկին, ծանր գաղտնիք մը կայ մէջտեղը:

ՈՒԶԱ. — Հարցումներուդ չպիտի կրնամ պատառ խանել, բարեկամ:

Ֆէ՛ԲՆ. — Եթէ չէք կրնար հարցումներուս պատավանել, ձեր աչքերը կը վկայեն իրողութիւնը. անպատճառ ամուսինիդ լքած է ձեզ: Այո՛, անկասկած, այդպէս է. տարակոյս չի վերցներ... . Ա՛հ... բուռն սիրոյ վախճանը այսպէս տխուր կ'ըլլայ... . ձեր ամուսնութեան հանգէսը շատ լաւ կը յիշեմ, այն յիմար մարդը ձեր սիրտը գողցաւ, ատանկ վայրենի և վատ մարդոց շատ քիչ կը հանգիպինք, անոնց սիրտը գութը ըստած բանը չիկայ, ամէն վատութիւն կրնան գործել... . սոսկալի... . շատ սոսկալի բան է:

ՈՒԶԱ. — Այո՛, սոսկալի բան է:

Ֆէ՛ԲՆ. — Ծնողքդ իրաւունք ունէր որ...

ՈՒԶԱ. — Ա՛հ... կը խնզրեմ լուցէք... կուրծքս կրակներու մէջ կ'այրի:

Ֆէ՛ԲՆ. — Տօքթէօրին հետ ձեր յարաբերութիւնը ի՞նչպէս է. ևս ասոր մէջ ալ սոսկալի գաղտնիք մը կը տեսնեմ... .

ՈՒԶԱ. — (Գարմացած) ա՛հ... ի՞նչեր կ'ըսէք պատըն Տօն Ֆէրնանտօ, ձեր խօսքերը ինձի վախս կը պատճանին, ա՛լ կը բաւէ, դուք ալ իմ վիճակէս կը գահշպարիք, դուք ալ զիս կը զրպարէք, օ՛հ, Աստուած իմ... . ևս ո՞քան գիրախտ արարած եմ եղեր... . ամէն մարդ ինձմէ կը խորչի... . բայց ևս անմիզ եմ, ազգաւ

կան ու բարեկամներէ զրկուած, աղքատ ու անօթութիւնն չտոկալով, պատուաոր կեանք մը ապրելու համար, ստիպուած եմ տան մը մէջ ուսուցչունի ըլլալ: Ապրելու համար ուրիշ ի՞նչ միջոցի կրնայի զիմել: Պարոն Արրիքօ Յալմիէրի պատկանը պաշտողանող անձերու գասակարգին կը պատկանի. անինձի պաշտպան կանգնեցաւ, լարիւրիւնթոսէն ազատ տեց զիս: Ա՛հ... խնզրեմ, պարոն Տօն Ֆէրնանտօ, այնքան մի՛ ամբարտանէք զիս, ևս թշուառ կին մընեմ, բայց սիրտս և խիզնս մաքուր է... .

Ֆէ՛ԲՆ. — Ձեր խօսքին կը հաւատամ տիկին, ևս ձեզ կը խղճամ:

(Ակատա բեմ կը մտնէ)

ՏԵՍԻԿ Գ.

Նոյն անձերը և ԱԿԱՏԱ.

ՈՒԶԱ. — Պարոն Ակատա, հրաման մը ունիք:

ԱԿԱՏԱ. — Տօքթորին հոս ըլլալը լուր առնելու եկայ, որովհետեւ Մօնսէնեէօր ձիեանինօն սրանը իրեն կը սարսէ, կարեւոր ըսելիք մը ունի եղեր:

ՈՒԶԱ. — (զարմացած) Մօնսէնեէօր ձիեանինօ... .

ԱԿԱՏԱ. — Անոր այցելութենէն զժո՞ն էք:

ՈՒԶԱ. — Ո՛չ... ո՛չ... բժիշկը տակաւին չփերաց դարձաւ, բայց ուր որ է հիմա կուգայ: Պարոն ձիեանինօ փոխանակ սրանը սպասելու, հոս թող հրամմէ, իր քեռորդին ալ հոս է... .

ԱԿԱՏԱ. — (ժպանլով) Շնորհակալ եմ տիկին, շատ լաւ... . (կ'երթայ):

Ֆէ՛ԲՆ. — Տիկին, դուք ալ հոս մնացէք. ձեզի համար օգտակար կ'ըլլայ, ձեր մասին ունեցած կտսկածը կը փարտափ, իմ խօսքերուս դուք քալ կ'օգնէք:

ՈՅՉԱ. — Ո՞չ, պարոն Ֆէրնանտօ, անկարելի է.
իմ ամուսնութենէս առաջ դուք կը ճանչնայիք զիս,
անմեղ աղջիկ մը ըլլալուս՝ ու պատուվի ապրելուս
համոզուած էք: Զեր մօրեղօր ըսէք պարոն ձիեսնիշ-
նոյին որ ևս ո և է մէկուն գէշութիւն ըրած չեմ, ինձի
ո և է բանով ամբաստանելը անիրաւութիւն է: Կը
խնդրեմ, թո՛ղ զիս հանդիսաւ ձգէ. այս տանը մէջ ես
պատովիս ժամանակ կ'անցնեմ: Պարոն Տօն Ֆէրնանտօ,
ըսածներս մի՛ մոռնաք Մնաք բարով: (Էմմա-
յին գացած տեղէն դուրս կ'ելլէ)

Ֆէրն. — (մեկուսի) դժգոհելու շատ պատճառներ
կան . . . :

ՏԵՍԻԼ Դ.

ՃԻԵՍՆԻՆՕ, ՏՕՆ ՖԷՐՆԱՆՏՕ

ՃԻԵՆ. — Տակուին հո՞ս էք . . . ձեր քննութիւն-
ներուն արդիւնքը կրնա՞մ հասկնալ:

Ֆէրն. — Մինչեւ հիմա այս մասին ամէն ջանք
թափեցի և քննութիւններ կատարեցի, բայց այդ պաշ-
տօնը իմ կարողութենէս վեր է:

ՃԻԵՆ. — Դուք այդ թշուառ կինը ո՞ւր գտաք,
հիմա կը հասկնամ. դուք կ'ուզէք անբարոյ կեանք մը
ապրիլ. Կնոջ մը նիստուկացը, ապրելակերպը շատ լաւ
կրնաք հասկնալ կիներու ձեւերէն, անոնց կեանքին
մէջ եղած յեղաշրջումէն՝ անբարոյ և կամ պատուաւոր
ըլլալնին շատ դիւրին կը հասկցուի:

Ֆէրն. — Այո՛, ես ինքս անոնց ընտանեկան կա-
ցութիւնը կրնամ հետապնդել, բայց և այնպէս մեղքե-
րուն թողութիւն տուող կրօնաւորները ա՛լ աւելի կա-
րող են ամէն բան հասկնալ:

ՃԻԵՆ. — Այդ տեսակ կիները կղերականներու
բնաւ չեն զիմեր:

Ֆէրն. — Ինչ սոսկալի մտայնութիւն, Աստուած իմ:
ՃԻԵՆ. — Հիմա ըսէ՛ տեսնենք, մինչեւ հիմա ի՞նչ
տեղեկութիւն քաղեցիր:

Ֆէրն. — Աս միակ տեղեկութիւնը քաղեցի. Ի՞ու
զալիան անմեղ է ու ո և է զատապարտելի յանցանքի
մը մէջ գտնուած չէ:

ՃԻԵՆ. — Անոր անմեղութեանը և բարյականի
մասին ձեռքերնիդ ո և է փաստ, ո և է ապացոյց ունի՞ք:

Ֆէրն. — Անոր մասին ձեր մնուցած հակակրու-
թիւնը, անոր նկատմամբ ձեր ունեցած խորչէնքը ապա-
ցոյցներ չե՞ն միթէ:

ՃԻԵՆ. — Կը սխալիք, բարեկամս, և թէ շատ կը
սխալիք, ես ո՛չ թէ անկէ կը խորշիմ, այլ կ'արգահա-
տիմ անոր վիճակին վրայ, շխակ ճամբու մէջ բերելու
համար զայն, շատ աշխատեցայ, մինչեւ իսկ առաջար-
կեցի ատեն մը մեր վանքը բնակիլ, բայց ինքը մեր-
ժեց, որով համոզւեցայ թէ անկէ բաժնուելու միտք
չունի ան:

Ֆէրն. — Որմէ . . . :

ՃԻԵՆ. — Իր սիրածէն . . . :

Ֆէրն. — Սրբիքոյէն ըսել կ'ուզէք, ո՛չ, շատ կը
սխալիք, մօրեղբայր, բժիշկը անոր տարփածուն չէ:

ՃԻԵՆ. — Ոչ թէ ես, այլ դուք կը սխալիք, զուք
Բալմիէրին չէք ճանչնար, անկրօն, անհաւատ մարդուն
մէկն է:

Ֆէրն. — Սրբքօ Բալմիէրին անկրօն, զարմանա-
լի բան . . . ի՞նչ կ'ըսէք մօնսէնեէօր:

ՃԻԵՆ. — Այո՛, ճշմարտութիւն է որ կ'ըսեմ, ան-
հաւատ է ան, կարգացած զրքերը տեսած էք, ան-
ւանի նկարչի մը ձեռքէն ելած նկար մը ունի տանը
մէջ, սենեակը զարդարուած է Սարնէի, Սրնօլաիի պէս
անկրօն մարդոց նկարներով:

Ֆերն .— Անոնց աժեհնքն ալ անուանի, նշանաւոր մարդիկ են:

Ճիվն .— Այս', այնպիսի մարդիկ, որ իրենց կեանքին մէջ մեծ համբաւ շահած են:

Ֆերն .— Կը սխալիք . անոնք մեծ համբաւի աէր, մարդկութեան շատ մեծ ծառայութիւններ մասուցած են . . . :

Ճիվն .— Ահ . . . ինչեր կ'ըսէք, ինզրեմ, միտքերնիդ ամփոփեցէք . . .

Ֆերն .— Դուք միշտ հոս չէք գանուիր, կը գար մանամ թէ ի՞նչպէս այս տեղի անցուգարձերը ճիշտ տեղն ի տեղօք լուր կ'առնէք:

Ճիվն .— Ես չորս պատերու մէջ իսկ ամէն բան կը տեսնեմ ու կը կոսինեմ . . .

Ֆերն .— Բայց կը գարմանամ որ դուք ի՞նչ նկատումներով կ'ամբաստանէք զանոնք, Սրբիքօի վիճակը և Թօգալիայի հետ ունեցած յարաբերութիւնը ի՞նչպէս կոսհեցիք . . . ահա՛ զիս շահագրգող կէտը աս է,

Ճիվն .— Աստուծմէ չվախցող, անկրօն մէկը խղճի և պատիւ չունենար, ասիկա դուք ամէն բանէ առաջ գիտնալու էք:

Ֆերն .— Բայց ամէն մարդ բժիշկին մարդաբրութիւնը և պատուաւորութիւնը կը դրուատէ . ամբողջ աղքատ գասակարգը չի դադրիր զայն զովելէ և օրնեւէ . ան չի զլանար իր ձեռքէն եկած բարիքը ընելու:

Ճիվն .— Բժիշկը այդ բարեկործութիւնները կ'ընէ արտաքուատ, որպէսզի ընդհանուրին համակրանքը շահի և բարի համբաւի տիրանայ, իսկ ներքուատ ընդհակառակը ամէն աղտաստութիւններով լիքն է:

Ֆերն .— Դուք բժիշկին զրայ յաւ համարում չուշնենալուզ, անոր պիտի զոհէք Թօգալիան:

Ճիվն .— Կե՛զ Թօգալիա . . . ամէն պարագայի այս տեղէն շատ հեռուները երթալու է ան:

Ֆերն .— Աղէկ մաածեցէք, մօրեղբայր, Թօգալիան ասանկ գէշութիւններու արժանի չէ . ես շատոնց կը ճանչնամ զայն, մարդու բարիք ուզող աղջիկ մընէ . եթէ երբեք այդ անյարմար ամուսնութիւնը չըլլար, աշխարհի կիններուն ամենաերջանիկը պիտի ըլլար:

Ճիվն .— Բսել է այդ աղջիկը ամուսնացած է . . . օհ, աւելի գէշ, և կամ աւելի աղէկ . . . բայց ամուսինը ուր է:

Ֆերն .— Զեմ գիտեր:

Ճիվն .— Իրարմէ բաժնուած են:

Ֆերն .— Այդ կինը մեղաւոր չէ:

Ճիվն .— Կինները միշտ մեղաւոր են:

Ֆերն .— Այդ աստիճան գէշ կերպով մի դատէք, ամէն բան փսատացիօրէն համոզուելու է նախապէս, ամէն բան քննելու է:

Ճիվն .— Ամուսնութեան մէջ քննութեան պէտք չիկայ:

Ֆերն .— Զեր այդ սխալ երեւակայութիւնն է որ աստանկ մատայնութեան կ'առաջնորդէ ձեզ:

Ճիվն .— Ի՞նչ . . . ի՞նչ տեսակ:

Ֆերն .— Այսինքն:

Ճիվն .— Զեր տուած տեղեկութեանց համար, մեծապէս չնորհակալ եմ:

Ֆերն .— (ի՞նքնիրեն) Ես այդ դժբախտ կնոշ օգնելուզեցի . բայց պատճառ եղայ որ գէպքերը ընդհակառակը գէշ վերջաւորութեան մը յանդին: (Ոկատա բեմ կուգայ)

Տեսիլ ե.

Նոյն անձերը և ԱկածԱ.

Ճիվն .— Ի՞նչպէս, պարոն բժիշկը եկաւ:

ԱԿԱՏԱ. — Շատանց է գալը, պարտէզը ծաղիկ
ժողվելով զբաղած է:

ՃԻԱՆ. — Սրդեօք վայրկեան մը ինձի ունկնդրեա-
լու շնորհը կ'ընէ:

ԱԿԱՏԱ. — Խնդրեց ինչ որպէսպի իր գրասենեակը
առաջնորդեմ ձեզ:

ՃԻԱՆ. — Բայց ո՞չ... հիմա անոր հետ առանց
վկայի տեսնուելու է:

ՖԵՐՆ. — Բայց ես...

ՃԻԱՆ. — Քիչ մը առանձին ձգեցէք մեզ:

ՖԵՐՆ. — Սմենայն սիրով (տօն Ֆէրնանտօ ուոքի
կ'ելէ):

ՃԻԱՆ. — (Ակատային) Նոր լուրեր ունիս:

ԱԿԱՏԱ. — Ո՞չ, նոր լուր չկայ... բայց աղջկանը:

ՃԻԱՆ. — Աղջկան ամբողջ կեանքը ուսումնափած-
և ամէն բանի տեղեկացած եմ: (Ակատա ձեռքը կը
համբուրէ) վաղը առառ քեզի կ'սպասեմ:

ԱԿԱՏԱ. — Շատ աղէկ, ձեր հրամաններուն ար-
ժանի ըլլալու պատիւը ունիմ: (Ակատա զուրս կ'ելլէ)

ՃԻԱՆ. — Եթէ պարոն վիլխատիան հիմա ինձի հետ
վիճաբանութեան բոնուի, պատրաստ եմ վիճաբանութեան
մտնել...

ՏԵՍԻԼ Զ.

ՃԻԱՆԻՆԾ ԵՒ ԲԱԼՄԻԵՐԻ

ԲԱԼՄԻ. — Մօնսէնեէօր, ձեզ սպասցնելուս համար
ձեր ներողութիւնը կը խնդրեմ, և որովհետեւ:

ՃԻԱՆ. — Էնդհակառակը... ես ալ անակնկալ այ-
ցելութեանս համար ձեր ներողութիւնը կը խնդրեմ:
Առանց պատճառի չէ որ այցելութիւն կուտամ:

ԲԱԼՄԻ. — Չեր այցելութեան նպատակը ի՞նչ որ
ալ ըլլայ... խնդրեմ նստեցէք:

ՃԻԱՆ. — Շնորհակալ եմ (կը նստի). մարդ չի լսեր
մեղ, այնպէս չէ:

ԲԱԼՄԻ. — Ո՞չ... ո՞չ մէկը:

ՃԻԱՆ. — Զեղի հետ շատ կարեւոր բաներու վրայ
պիտի խօսիմ:

ԲԱԼՄԻ. — Ես ալ ամենայն սիրով պիտի ունկընող.
րեմ ձեզի:

ՃԻԱՆ. — Վերապահումներէ դատ, գործին կարե-
ւոր մասերը պիտի պարզեմ ձեզի:

ԲԱԼՄԻ. — Հրամմեցէք, խօսեցէք, որովհետեւ
համբերութիւնս կը հատնի պակաս:

ՃԻԱՆ. — Ինքնութիւնը անձանոթ եղող այդ կնոջ
մասին պիտի խօսիմ ձեզի:

ԲԱԼՄԻ. — Ո՞վ է այդ անձանոթ կինը, խօսեցէք
պարոն, կը խնդրեմ:

ՃԻԱՆ. — Ռօզալիայի մասին պիտի խօսիմ:

ԲԱԼՄԻ. — Նոր բան մը չէ ատ. ասով հանդերձ
զիս զգո՞ն պիտի ձգէք.

ՃԻԱՆ. — Եւ զո՞ն չպիտի թողու ձեզ, բայց ես
կ'ուզեմ որ այս կինը անպատճառ այս տեղէն հեռանայ:

ԲԱԼՄԻ. — Ինչո՞ւ համար, պարոն:

ՃԻԱՆ. — Ասկէ աւելի բան մը չեմ կրնամ ըսել:

ԲԱԼՄԻ. — Ուրեմն մեր այս տեսակցութիւնը ան-
հետեւանք պիտի մնայ. զո՞ք զիս վիլխատիայ կան-
ւանէք, վիլխատիայ մը ամէն բանի մէջ ձշմարտու-
թիւնը վնասուելու է: Չեր խօսքերէն բան մը չհակնայ,
Ռօզալիա պատռաւոր և ազնուական կին մըն է. տան
մէջ անոր պաշտօնը գասախօսել է:

ՃԻԱՆ. — Աղջկանդ կը դասախօսէ:

ԲԱԼՄԻ. — Կը կասկածի՞ք միթէ:

ՃԻԱՆ. — Բնաւ չեմ կասկածիր, միայն թէ այդ
աղջկանը անցեալով կը շահագրգութիմ այդ աղջիկը հոս-
ծնաւ ու իմ ձեռքովս մկրտուեցաւ:

ԲԱԼՄԻ. — Ի՞նչպէս կ'ըլլայ...:

ՃԻԱՆ. — Կարծեմ թէ բուն էմման Քաթանիայի մէջ մեռած է, այս, երբ զուք այդ քաղաքը փոխադրուեցաք, անկէ երկու ամիս յետոյ մեռաւ:

ԲԱԼՄԻ. — Սուտ խօսեր են ձեզի:

ՃԻԱՆ. — Ասկէ աւելի ճշմարիտ, աւելի շիտակ բան մը կասկածի չենթարկուիր, պարոն, այսօր Պէնէտիկեան կրօնաւորներու վանքէն առի անոր մահուան վկայագիրը: Բուն ճշմարտութիւնը հաստատով այս թուղթը իբրեւ փաստ չի բաւեր..., հրամմեցէք պարոն... (թուղթը երկարելով) առէք, թող ձեր քոյ մնայ, անոր պէտք չունիմ այլեւս, եթէ կը փափաքիք՝ պէտք եղած քննութիւնը կատարեցէք, այդ վկայագրին ուրիշ մէկ օրինակն ալ իմ քովս կը գտնուի: Ես փիլասոփայ չեմ, բայց ամէն բանի վկայութեամբ ճշմարտութիւնը գտնելու կ'աշխատիմ:

ԲԱԼՄԻ. — Մէկուն գաղտնիքին տեղեակ ըլլալու և անոր սարսափ ազդելու չափ առաջ երթակ՝ մարդ չի կրնար երեւակայել ատկէ աւելի գարշելի բան մը, ուր մնաց ձեզի չերաբերով բաներու միջամտել, բան մը որուն մէջ իրաւունք չունիք:

ՃԻԱՆ. — Ասանկ գործերու մէջ իմ նուիրական պարտականութիւնս է միջամտել:

ԲԱԼՄԻ. — Ա՛ն... կը չնորհաւորեմ մօնսէնեէօր:

ՃԻԱՆ. — Ըսկէ ձեր կնոջ մահուանէն ետքը երկրորդ անգամ ամուսնացաք, այնպէս չէ, ահա՛ այս կէտն է որ ամէն ինչ կը պարզէ, երկրորդ էմմային ձեր գաւակը չըլլալը:

ԲԱԼՄԻ. — Կրնայի այս մասին բացատրութիւն տալ ձեզի, բայց անձնականիս վերաբերեալ գործերու համար, բացի խիզէս ուրիշին բացատրութիւն տալու պարտաւոր չեմ: Էմմային ծնունդը ապօրէն ըլլալը կամ չըլլալը Ոօզալիային աղջիկը ըլլալուն մէկ ապացոյցը չէ:

ՃԻԱՆ. — Այս', ապացոյց չկայ... բայց կասկած կը հրաւիրէ:

ԲԱԼՄԻ. — Սաորին մարդիկն են որ կը կասկածին: ՃԻԱՆ. — Իրաւունք ունիք, բայց Ոօզալիային այրի րլլալը չէք կրնար ուրանալ, հիմա ինք ամուսինէն բաժնուած կ'ապրի, ասոնք ճշմարտութիւններ ըլլալով հանգերձ, ամէնքէն ալ տեղեկութիւն ունիմ:

ԲԱԼՄԻ. — Այս', ճիշտ է որ տեղեկութիւն ունիք: ՃԻԱՆ. — Այդ կինը իր ամուսինէն բաժնուելէն ի վեր ձեր քովը ատեն կ'անցնէ:

ԲԱԼՄԻ. — Ամուսնէն բաժնուած է, միթէ անկարելի է, ի՞նչ պատճառով ամուսնէն բաժնուած կրնայ ըլլալ:

ՃԻԱՆ. — Պատճառը ինձի յայտնի չէ, հեաեւաբար չեմ կրնար ատոր պատասխանը տալ:

ԲԱԼՄԻ. — Շատ ազէկ, քանի որ չէք կրնար այս հարցումիս պատասխանել, ինչո՞ւ համար անպաշտպան և անմեղ անձերը զրաբարտելու կ'ելլէք:

ՃԻԱՆ. — Եթէ այդպէս է, թող մեկնի:

ԲԱԼՄԻ. — Ո՞ւր:

ՃԻԱՆ. — Ամուսնին քովը:

ԲԱԼՄԻ. — Նիսրովի բերդը:

ՃԻԱՆ. — Ի՞նչպէս, չկրցի հասկնալ:

ԲԱԼՄԻ. — Տասն և չորս տարիէ ի վեր դատապարտուած է ան:

ՃԻԱՆ. — Դատապարտուած, ա՛ն, Աստուած իմ, ըսել է ամուսինը երեսի վրայ ձգած, եկած է:

ԲԱԼՄԻ. — Անոր ձեռքը ի՞նչ կայ:

ՃԻԱՆ. — Ամէն բան:

ԲԱԼՄԻ. — Ես ամէն բան գիտեմ, բնաւ յանցանք չունի ան:

ՃԻԱՆ. — Այդ պարագային՝ յանցաւորը ո՞վ կրնայ ըլլալ:

ԲԱԼՄԻ. — Ամուսինը ցկեանս բերդարգելութեան գատաղարտուած է, հոն պիտի մեռնի, օրէնքը չի թոյշ-լատրեր որ կինը ո և է միջամտութիւն ընէ, ասկէ զատ-ամուսինը չմեռած երկրորդ անգամ չի կրնար ամուս-նանալ:

ՃԻԱՆ. — Այո, օրէնքը չի թոյլատրէր:

ԲԱԼՄԻ. — Ես անանկ բանի վրայ հաւատք չունիմ:

ՃԻԱՆ. — Դուք անհաւատի մը նման կ'արտայայ-առիք, (ոտքի ելլելով) Թօգալիայի մասին ձեր տալիք որոշումին կ'ապասեմ:

ԲԱԼՄԻ. — Իմ որոշումս, ո՛չ մէկը ուրիշի մը հան-գատութիւնը վրդովելու իրաւունք ունի, և ոչ ալ ըն-ստանիքի մը ապրելակերպին միջամտելու իրաւունք ունի: Թօգալիան խեղճ, թշուառ կին մըն է:

ՃԻԱՆ. — Այդ խնդիրներու մասին վերջը կը տես-նուինք:

ԲԱԼՄԻ. — Ուզած ատեննիդ: Հիմա ուրիշ ըսելիք մը ունիք:

ՃԻԱՆ. — Ո՛չ.

ԲԱԼՄԻ. — Շա՛ւ լաւ, (Ճիեանինո կ'ելլէ) խեղճ Թօգալիա, աղջիկէն բաժնել զայն, անոր թշուառու-թիւնը պատճառ ըլլալ, ա՛հ, ո՛չ, ո՛չ, ան չի կրնար տոկալ զրկանքներու, թշուառութիւն:

Վարագոյրը կ'իջնէ

ԱՐԱՐ Բ.

(Ճիանինոյի գրասեթեակը, գրասեղանին վրայ գիր-եր պատմական պատկեւներ, թաթարան եւ աղօրելու մասնաւոր տեղ:)

ՏԵՍԻԼ Ա.

ՃԻԱՆԻՆՕ (առանձին)

ՃԻԱՆ. — (Եստած, զիրք կը կարգայ գրասեղանին առջեւ, յետոյ զիրքը գոցնով գրասեղանին վրայ կը զնէ), բանտարկուած, յանցանքը ի՞նչ է արդեօք այդ կէտը անպատճառ հասկնալ կ'ուզնիմ, ասիկա շատ կա-րեւոր խնդիր մըն է, այս խնդիրը պիտի լուսաբանէ Թօգալիային անցուցած կետնքը: այս տեղէն անպատ-ճառ հեռացնելու է զայն: Ա՛հ, ի՞նչ ապուշութիւն ըրի, անոր համար վկայութիւն տուողները հոսկէ չհասցը-նելով, եթէ ամուսինը բանտարկուած չըլլար, ամէն պարագայի՝ անկէ վրէժ կը լուծէր, սոսկալի բան: Աստուած իմ, ո՞վ կրնայ ասոր համբերել, նարօլիի մէջ շատ մը բարեկամներ ունիմ, այս խնդրոյ մասին ա-նոնցմէ կրնամ քաղել պէտք եղած տեղեկութիւնները: Այս զիշեր ընելիքս որոշելու եմ: (այս միջոցին Քայշ-թանօ երկու ձրագներ ձեռքը՝ ներս կը մանէ)

ՏԵՍԻԼ Բ.

ՃԻԱՆԻՆՕ և ՔԱՅԹԱՆՕ

ՔԱՅԹ. — (Ճրագները գրասեղանին վրայ զնելով) Յարգելի հայր, կը հաճիք ծառանիդ ընդունիլ:

ՃԻԱՆ. — Յարի եկա՛ր, զաւակս:

ՔԱՅ. — Քիչ մը առաջ անձանոթ մէկը մտաւ մեր վանքը:

ՃԻՍՆ. — Ով ըլլալը չհասկցաք, զիշերուան այս ժամուն ո՞վ կրնայ հոս գալ:

ՔԱՅ. — Այո՛, հարցափորձեցի զայն, խղճալի մարդ մը կ'երեւէր . . . մըմբթալով կը խօսէր, վախնալու եւ բեռյթ մը ունէր, վերջապէս սա չափը միայն կրցի հասկնալ թէ ձամքան կորմնցնելով հոս ապաստաներէ, ու կը խնդրէ որ այս զիշեր պառկելու տեղ մը չնորհնը իրեն . . .

ՃԻՍՆ. — Այսպէս ձամքան կորմնցուցած մէջտեղը մնացած ձամբորդները մերժել մարդկային խղճի դէմ է: Մեր շրջակայ լեռները աւազակներով լեցուն են արդէն:

ՔԱՅ. — Վրան զէնք և այժն չունի, բայց դուցէ պահած է զայն:

ՃԻՍՆ. — Վրան զլուխը ի՞նչպէս է:

ՔԱՅ. — Մեր գտնուած քաղաքին մարդոց պէս հագուած է: Կօշիկները մեծկալ և լայն, զլխարկը թաշ լապրիացիներու յատուկ ձեւով, ինքը միջահասակ, թիստոյն, սեւ աչքերով ու մօրուքն ալ ածիլուած . . .

ՃԻՍՆ. — Մօտաւորապէս քանի՞ տարեկան կայ:

ՔԱՅ. — Քառասուն ատրեկան, ոտքի ելլելու կարողութիւն չունի, շատ տկար է . . .: Յարգելի հայր, կը փափաքի՞ք ձեր ներկայութեան հարցաքննել:

ՃԻՍՆ. — Այո՛, այո՛, ամէն պարագայի՞ ես պէտք է հարցաքննեմ, բայց մեր մարդոցը ըսէ, զգոյշ կինան և հոկեն:

ՔԱՅ. — Ի հարկէ . . . ծառանիդ ձեզմէ առաջ մտածեց, (Քայթանո ոտքի կ'ելլէ):

ՃԻՍՆ. — (առանձին) Եթէ այս մարդը իրաւ ոճրագործ մը կամ աւազակ մըն է, սխալ ձիւզի մը վրայ կոխած պիտի ըլլանք, բայց ինչ փոյթ, ո՞վ կ'ուզէ թո՞ղ ըլլայ, վախնալիք բան մը չունիմ: Ասանկ մար-

զիկ աւազակ ըլլալով հանդերձ, նորէն ասառուածավախ են: Կարծեմ թէ հոս կուզան: (Քայթանո Քօրբատօն ներս կը մացնէ)

ՃԻՍՆ. Գ.

ՃԻՍՆԻՆՈ, ՔԱՅԹԱՆՈ ԵՒ ՔՕՐԲԱՏՈ

ՔԱՅ. — (Քօրբատօն) Մեր յարգելի մօնսէնեէօրին առջեւ կը գտնուիք:

ՃԻՍՆ. — Մօտեցի՛ր, զաւակս, մօտեցի՛ր, մի վախնար: Որքա՞ն ալ յոզնած էք: (Քայթանոին) Քայթանո, աթոռ մը տուէ՛ք, (Քայթանո աթոռ կուտայ)

ՔՕՐ. — (նստելով) Շնորհակալ եմ, յարգելի հայր:

ՃԻՍՆ. — (Քայթանոին) զուն քաշուէ՛, Քայթանո, (Քայթանո ոտքի կ'ելլէ) խօսէ՛, տեսնենք:

ՔՕՐ. — Շնորհ մը պիտի խնդրեմ յարգելի հօրմէս: Այս զիշեր հոս մնալուն հրաման ընէիք, քիչ մը հանս զիստի կարօտ եմ, այսօր առաւօտէն մինչեւ իրիկուն ձամբայ քալեցի, հոս հասնելուն մութը կոխեց, ձամբաս չկրցի շարունակել այլեւս, երբ լսեցի զանգակին ձայնը, խկոյն եկեղեցի փոյթացի ու ազօթքի մրմունջաներ ուղղեցի Աստուծոյ, շատոնց է որ եկեղեցի չիմ յաշախած և չիմ ազօթած:

ՃԻՍՆ. — Ա՛հ . . . Աստուծոյ փառք տուր որ քեզ հոս առաջնորդեց, և ես շատ ուրախ եմ որ քեզի ցոյց պիտի տամ, Աստուծոյ ողիզ ձամբան:

ՔՕՐ. — Ես ալ արգէն ազօթելու մեծ փափաք կը զգամ իմ մէջս . . .

ՃԻՍՆ. — Եթէ հոգեով հիւանդ էք, ես պիտի ջանամ ձեր հողին փրկել:

ՔՕՐ. — Ա՛հ . . . հոգիս փրկել . . . յարգելի հայր . . . ես բնաւ չեմ հաւատար ատոր:

ՃիԱՆ. — Ի՞նչու մարդս պէտք է միշտ անսայ խղձին:
ՔՕՐ. — Խղձի խայթ ըսկք . . .
ՃիԱՆ. — Բայց ի՞նչու այսչափ կը դողդողաք. հան-
դարսեցէք զաւակս . . .
ՔՕՐ. — Հանդարս . . . խղձի խայթ ունենալ . . .
ահ . . . դուք զիս յանցաւորի և մեղաւորի տեղ
կը դնէք . . .
ՃիԱՆ. — Ո՞չ . . . ո՞չ . . . վստահ եղէք որ ա-
պահով տեղ մը կը գանուիք.
ՔՕՐ. — Բսէք, յարգելի հայր, իբր հիւր պիտի
ընդունիք զիս . . .
ՃիԱՆ. — Զեր վիճակին մեղքնալուս համար, իբրև
հիւր վար կը դնեմ ձեզ:
ՔՕՐ. — Յարգելի հայր, հարուստ չեմ, բայց մին-
չեւ հիմա պատովս ապրած և արուեստովս ատեն ան-
ցուցած եմ . . .
ՃիԱՆ. — Ի՞նչ արհեստով կ'զբաղիք:
ՔՕՐ. — Նկարչութեամբ կը պարապիմ:
ՃիԱՆ. — Սիկիլիացի էք . . .
ՔՕՐ. — Այո՛, ատեն մը հոն կը բնակէի:
ՃիԱՆ. — Բնանիք ունիք . . .
ՔՕՐ. — Ատենօք ունէի:
ՃիԱՆ. — Հիմա մինակ էք:
ՔՕՐ. — Այո՛ . . . մինակ . . . բոլորովին մինակ . . .
բայց կը խնդրեմ, յարգելի հայրիկս, սրտիս վէրքերը
մի՛ բանաք, դուք գատաւորի մը պէս կը հարցաքննէք
զիս, դուք պարզապէս կը վախցնէք, իմ անցեալս ու-
ներիսս արդեօք ի՞նչ նկատումներով ձեզ կը շահա-
գրգռեն . . . : Խնդրեմ այլեւս վերջացուցէք, միմիայն
այս գիշեր ձեզի հետ մնալով, վաղը ճամբաս պիտի շա-
րունակեմ, առաւօտուն երբ քուներնուզ արթննաք հոս-
չպիտի գտնէք զիս . . . : Հիմա ձենէ շերտ մը հաց եւ
քիչ մը ջուր կը խնդրեմ. ահա ասոնցմով երակներս

մրկող հուրը պիտի մեղմացնեմ, ասկէ աւելի բան մը
չեմ խնդրեր ձենէ:

ՃիԱՆ. — Ի՞նչ կ'ըսէք, զաւակս, ես սիրով ընդու-
նեցի ձեզ, այս գիշեր իմ հետ էք, բայց ձեզի ուրիշ
զիւրութիւններ ալ առաջ համար, վաղն առառ ասկէ
մեկնենէզ յետոյ ուր երթալիդ կ'ուզեմ հասկնալ.

ՔՕՐ. — Ուղղակի Քաթանիս պիտի երթամ:

ՃիԱՆ. — Եթէ ձեզ ձանցած ըլլայի, ձեղի ընկեր
մըն ալ կուտայի որպէսզի հոն երթաք:

ՔՕՐ. — Շնորհակալ եմ, այս չափին ալ գոհ եմ:

ՃիԱՆ. — Առաջին անգամն է որ այդ քաղաքը
կ'երթաք:

ՔՕՐ. — Իմ ծնած քաղաքս է:

ՃիԱՆ. — Եթէ այդպէս է, ուրեմն ձեզի վերջին
հարցում մը եւս ընեմ, Քաթանիսի մէջ Ֆէրնանտո
Միրանտ անունով երթասարդ մը կը ձանչնաք:

ՔՕՐ. — Այո՛, այդպիսի մէկը կը յիշեմ, բայց այն
օրու ընէ ի վեր շատ ժամանակ անցած է: Ֆէրնանտո
իրաւաբանութեան ուսման կը հետեւէր:

ՃիԱՆ. — Այո՛, նոյն ինքն է:

ՔՕՐ. — Ամէն բան կամաց կամաց միտքս կուգայ,
Ֆէրնանտօի հետ շատ ալէկ կը տեսնուէինք, իմ ամե-
նամերիմ բարեկամն էր . . .

ՃիԱՆ. — Ուրեմն հիմա կրնամ աւելի օգնել քեզի:

Ֆէրնանտօն իմ քեռորդիս է ու հոս կը գանուի . . .

ՔՕՐ. — Ես միայն հանգիստի պէտք ունիմ, ուրիշ
բան չեմ ուզեր, երկրորդ անգամ ըլլալով ձենէ կը
խնդրեմ պառկելու անկողին մը, հոգ չէ շուներուն
պառկած հիւզը ըլլայ . . .

ՃիԱՆ. — Ես ձենէ պիտի խնդրեմ որ քիչ մը
սպասէք մինչեւ որ Ֆէրնանտօն հոս կանչել տամ, որ-
պէսզի ձեղի հետ վայրկեան մը տեսնուի, (զանգակը
զորնելով: Քայթանո կուգայ) Քայթանո՛, Ֆէրնան-

տօին ըսէք որ հոս գայ, Քաթանեացի բարեկամը կը փափաքի իր հետ տեսակցիլ . . . :

Ք0Ռ.— Յարգելի հայր, զոնէ քիչ մը խղճացէք, կը տեսնէք որ ի՞նչ թշուառ վիճակ ունիմ. (Երթալ կ'ուզէ)

ՃԻՍՆ.— Կեցէք . . . խնդրեմ, ի՞նչու կը բարկաւնաք, այդ բնաւորութիւնը շատ փորձանքներ կը բերէ մարդուս զլխուն. մինչեւ իսկ յանցաւոր ըլլալու մասին կասկած կը հրաւիրէ . . . :

Ք0Ռ.— Յանցաւոր . . . օ՞հ Աստուած իմ, սոսկալի բան է, (աթոռը կը նստի) այո՛, հասկցայ, ամէն բան հասկցայ, իրաւոնք ունիք . . . :

ՃԻՍՆ.— Ահա՛ քեռորդիս կուզայ, անոր հետ մինակ պիտի թողում ձեզ, ուզածնուռ չափ տեսնուեցէք:

Ք0Ռ.— Ինչպէս որ կը փափաքիք, յարգելի հայր:

ՃԻՍՆ.— Մարդս կրնայ աւելի համարձակ խօսիլ հին բարեկամներու հետ (Ճիսնինօ ոսքի կ'ելլէ:)

Ք0Ռ.— (առանձին) Խօսքեր կան, որոնք մարդուս երակները կը բորբոքեցնեն. ես Ֆէրնանտօին ի՞նչ պէտք ունիմ. . . : Ինձի հետ ի՞նչ խօսելիք կրնայ ունենալ, ա՞հ, կարելի է ելքի ճամբայ մը ցոյց կուտայ ինձի, կարելի է ցաւերս կ'ամոքէ, անոնք տակաւին կ'ապրի՞ն արգեօք, ի՞նչ տեսակ փորձանքներ, ի՞նչ յուզումներ և ի՞նչ տառապանքներ պիտի քաշեմ, եթէ զետնին տակն ալ անցնելու ըլլան, գարձեալ պիտի հետապնդեմ զանոնք, անպատճառ ուր ըլլալնին պիտի իմանամ:

ՏԵՍԻԼ Դ.

Ք0ՐՐԱՏՕ, Ֆէրնան80 եւ ՔԱՅԹԱՆ0

Ֆէրն.— (ներս մտնելով) Ո՞ւր է յարգելի հայր բերնիս . . . :

ՔԱՅ. — Ան զնաց, ձեր բարեկամին մօտ մինակ ձգելով ձեզ:

Ֆէրն.— (զարմացած) Այս պարո՞նն է . . . :

ՔԱՅ. — Այս պարոն, ձեզի մինակ ձգելու պարաւոր եմ, եթէ հրաման մը ունենաք, անմիջապէս կուզամ. (կ'երթայ)

Ֆէրն.— (Քօրրատոյի մօտենալով) բարեկամ, մենք ուր իրար տեսած և ձանչցած ենք:

Ք0Ռ.— Քաթանիայի մէջ:

Ֆէրն.— Ծառո՞նց:

Ք0Ռ.— Այո՛, շատ տարիներ առաջ:

Ֆէրն.— (Քօրրատօն զիաելով ուշազիր) Այո՛, աւտանկ բան մը կը յիշեմ, առանց սխալելու:

Ք0Ռ.— Երկար բարակ ծամծմելու պէտք չկայ, ես Քօրրատօն եմ, ձեր թշուառ բարեկամը եղող Քօրրատօն:

Ֆէրն.— Քօրրատօ՞ . . . այո՛, այո՛, ա՞հ բարեկամս, ողջագուրեցէք զիս . . . ա՞հ, արդեօք երա՞զ է տեսածս, որքան փոխուեր էք:

Ք0Ռ.— Դուք տակալին կը պահէք ձեր թարմութիւնը և երիասարդութիւնը: Այս, բարեկամս, տառապողները շտառվ կը ծերանան . . . դուք միշտ երջանիկ ապենը էք. թշուառութիւն չէք տեսեր. բայց ձենէ բաժնուելէս յետոյ, իմ կեանքս ամբողջ զգբախտութեամբ անցաւ:

Ֆէրն.— Իրաւոնք ունիք, բարեկամս, արդէն ձեր հագած տարօրինակ հագուստները կը վկային այդ մասին . . . :

Ք0Ռ.— Բախտին զարձուածքներն են ասոնք:

Ֆէրն.— Ծառ ճիշտ է, այո՛, ամէն ի՞նչ կը հասկնամ հիմայ . . . :

Ք0Ռ.— Գիտցածնիդ ի՞նչ է:

Ֆէրն.— (Ինքինքնիքին զալով) Համարէ թէ բան մը չեմ զիտեր, բայց ձեր կերպարանքը արդէն ցոյց

կուտայ թէ տառապած էք: (ի՞նքնիրեն) Զեմ զիտեր թէ
ուրկէ սկսիմ:

ՔՕՐ.— Կրնա՞մ հասկնալ թէ ի՞նչ կը խորհիք իմ
վրաս...:

Ֆէ՛ՐՆ.— Բնաւ միտքէս չէր անցներ որ զարձեալ
ձեզ պիտի տեսնէի, սա անակնկալ հանգիպումը չէի
նախասեաբ... բայց խօսեցէք, բարեկամս, խնդրեմ
խօսեցէք, ո՞ւր էիք, ո՞ւր տեղէն կուգաք, ամէն բան
հասկնալ կ'ուզեմ:

ՔՕՐ.— Բնանէ մը տեղեկութիւն չունիմ, բան մը
չպիտի կրնամ ըսել...:

Ֆէ՛ՐՆ.— Զարմանալի բան, ևս Քաթանիտէն մեկ-
նած տաենս զուքը ամուսնացած էիք:

ՔՕՐ.— Այո՛, ամուսնացած էի:

Ֆէ՛ՐՆ.— Կինդ հիմա ո՞ւր է: Մեռա՞ծ է:

ՔՕՐ.— Զեմ կարծեր, կ'ապրի:

Ֆէ՛ՐՆ.— Ուրեմն իրարմէ բաժնուած էք.

ՔՕՐ.— Այո՛ բարեկամս, աւա՛զ:

Ֆէ՛ՐՆ.— Ի՞նչ պատճառներով:

ՔՕՐ.— Սոսկալի իրողութիւններ պատճառ եղած են:

Ֆէ՛ՐՆ.— Կրնա՞ք բացարել:

ՔՕՐ.— Ո՛չ, բարեկամս, անկարելի է:

Ֆէ՛ՐՆ.— Քաթանիա երթարու մի՞տք ունիք:

ՔՕՐ.— Այո՛, պիտի երթամ:

Ֆէ՛ՐՆ.— Յոյս ունի՞ս որ ընտանիքդ հոն պիտի
գտնես...:

ՔՕՐ.— Այո՛, կը յուսամ որ աղջկանս հետ միա-
սին գտնիմ...:

Ֆէ՛ՐՆ.— (Զարմացած) Զե՞ր աղջիկը:

ՔՕՐ.— Այո՛, պարոն, սիրական Սղայիս, ա՞հ,
և խեղճ աղջիկը որբ և անտէր ձգած եմ տասնըչորս
տարիններէ ի վեր, անոր մասին տեղեկութիւն առնել
ուզեցի, բայց փափաքիս չհասայ, զուք ալ անոր մա-
սին բան մը չէ՞ք զիտեր...:

Ֆէ՛ՐՆ.— Թիչ մը տեղեկութիւն ունիմ...

ՔՕՐ.— Ի՞նչ կ'ըսէք... տակաւին կ'ապրին ա-
նոնք... խնդրեմ, խօսեցէք, աղջիկս տեսա՞ք:

Ֆէ՛ՐՆ.— Բարեկամս, հանգարակցէք, ամէն բան
պիտի պատմեմ ձեզի ընտանիքից մասին քիչ մը տե-
ղեկութիւն ունիմ... բայց աղջկանդ մասին...

ՔՕՐ.— Անշուշտ, մօրը հետ միտափին կը գտնուի
ան...:

Ֆէ՛ՐՆ.— Ո՛չ բարեկամս...:

ՔՕՐ.— Դուք Ռօզալիան տեսա՞ք:

Ֆէ՛ՐՆ.— Այո՛ տեսած իմ. Եթէ կ'ուզէք անոր հետ
տեսնուիլ:

ՔՕՐ.— Ի՞նչու ևս այսպէս գժբախտ եղայ:

Ֆէ՛ՐՆ.— Դուք հոս կեցէք...: Ռօզալիան հոս է:

ՔՕՐ.— Ռօզալիան հո՞ս... իրա՞ւ կ'ըսէք, ա՞հ,
ի՞նչ երջանկութիւն, բնաւ չէի յուսար Ռօզալիան այս-
չափ գիւրին գտնել:

Ֆէ՛ՐՆ.— Ա՞հ, ի՞նչ տխմարութիւն ըրի... ի՞նչու
աճապարեցի... ի՞նչու կը զուզաք, ի՞նչ ունիք...

ՔՕՐ.— Բնան մը չունիմ, վստահ եղէք, ջիղերս
թուզած են... Ռօզալիան տեսնել կ'ուզեմ...: բայց
Աթան ո՞ւր է...:

Ֆէ՛ՐՆ.— Զեզի ըսի որ աղջիկը իր հետը չէ:

ՔՕՐ.— Աստուած իմ, աղջիկս մեռա՞ծ է արդեօք,
նիհար և տկարակազմ էր արդէն. անօթութիւնը և
տառապանքը բոլորովին փացուցած են զայն... ալ
չպիտի կրնամ տեսնել հոգեհատորս:

Ֆէ՛ՐՆ.— Կարելի է զիշերօթիկ վարժարան մը դրած
է, ամէն բան կը հասկնաք Ռօզալիայէն:

ՔՕՐ.— Իրաւունք ունիք... խնդրեմ: Ռօզալիա-
յին քովը տարեք զիս, որովհետեւ ինձի համար եթէ
կայ յութիրական բան մը, ան ալ հասկնալ, իմանալ է
աղջկանս կացութիւնը...:

Ֆէ՛ԲՆ. — Այդքան մի՛ աճապարէր, քու հոս ըլւալդ զիանալու չէ ան:

Ք0Ր. — Այս մասին իրաւունք ունիք, բայց կ'ուղեմ քանի մը տեղեկութիւններ քաղել, արդեօք Ռօզալիան պիտի՞ վախաքի ինձի հետ ահսնուիլ... արդեօք զիս մոռցած է, ա՛հ, ո՛չ, ո՛չ, անկարելի է, այս կերպարանքէս պիտի վախնայ, և պիտի յուզուի:

Ֆէ՛ԲՆ. — Իրարու հանդէպ բուռն սէր մը կը տածէիք, եթէ այդ սէրէն կայց մը մնացած է ձեր երկուքին սրաին մէջ, այդ սէրը ամէն բան կը մոռցնէ.

Ք0Ր. — Օ՛հ, Աստուած իմ, ամէն բան:

Ֆէ՛ԲՆ. — Այս՝, ամէն բան, ևս վստահ եմ թէ Ռօզալիան ձեղ մերժելու չափ անխիզն չէ:

Ք0Ր. — Անոր յիշողութեանը մէջ իմ յիշատակէս նշոյլ մը մնացած է միթէ..., Թօզալիա իր օրապահիւ կը հանելու կ'աշխատի, այնպէս չէ, ի՞նչ գործով կը զբաղի:

Ֆէ՛ԲՆ. — Ուսուցչուհիի պաշտօնը կը կատարէ:

Ք0Ր. — Ուսուցչուհի՝... կինս ուսուցչուհի՝... որո՞ւ քով... որո՞ւ տանը մէջ:

Ֆէ՛ԲՆ. — Բժիշկ Արրիքօ Բալմիէրին աղջկանը զաս կուտայ:

Ք0Ր. — Այդ բժիշկը ընտանիք ունի՝

Ֆէ՛ԲՆ. — Ո՛չ... շատոնց մեսած է:

Ք0Ր. — Քանի՞ տարեկանը է:

Ֆէ՛ԲՆ. — Քառասուն տարեկան կայ:

Ք0Ր. — Ա՛... երխասարդ է եղեր... Թօզալիա անոր աղջկանը ուսուցչուհին է... պաշտօնը ուսուցչուհի՝ է միայն:

Ֆէ՛ԲՆ. — Վստահ եղեք, բարեկամս, միայն այդ պաշտօնով կ'զբաղի, լաւասեղեակ եմ այդ մասին:

Ք0Ր. — (Չեռքը սեղմելով) Ենորհակալ եմ բարեկամս... ո՞րքան ատեն է որ հոն կը գտնուի, բաժնուած ատենս հազիւ տամնը ինը տարեկան էր:

Ֆէ՛ԲՆ. — Ի՞նչ ըսել կ'ուզէք:

Ք0Ր. — Փա՛ռք Ամենակալին որ մեռելներուն քունը յաւիտենական է, եթէ յօժարիէն յարութիւն առնել, այն ատեն վայ մեր զիլուուն...:

Ֆէ՛ԲՆ. — Ի՞նչ յունեան մտածումներ կը յայտնէք, բարեկամս, արդեօք կրնամ ձեր միաքը հասկնալ:

Ք0Ր. — Ո՛չ, ես այդքան յունեան չեմ:

Ֆէ՛ԲՆ. — Հաւատացէք որ ձեր ըսածներէն բան մը չեմ հասկնար, ի՞նչ որ է, հանգարանցէք... Թօզալիա ձեր ընտանիքն է, հարամաննիդ վերջնական պիտի ըլլայ, ո՞ւր որ երթաք ան ձեզ պիտի հետեւի:

Ք0Ր. — Ինձի պիտի հետեւի:

Ֆէ՛ԲՆ. — Վստահ եղեք բարեկամս, մինչեւ Քաթանիա պիտի երթաք, անոր ծնողքը:

Ք0Ր. — Ի՞նչ ծնողք:

Ֆէ՛ԲՆ. — Թօզալիային պարագաները մեռած կը կարծես, եղբայրը Ալօնիզոն դեռ կ'ապրի:

Ք0Ր. — Ալօնիզօ... Ալօնիզօ... (աթոռին վրայ իյնալով երեսը կը ծածկէ)

Ֆէ՛ԲՆ. — Քօրրատօ՛, Քօրրատօ՛: Ի՞նչու այդ աստիճան գունաթափ եղար և յուզուեցաւ, ձեր այս շփութութենէն բան մը չկրցի հասկնալ: (նոյն պահուն ձիանինո ներս կը մանէ)

ՏԵՍԻԼ Ե.

Նոյնք և ՃԻԵԱՆԻՆԾ

Ֆէ՛ԲՆ. — Հրամմեցէք, յարգելի հայր:

ՃԻԵՆ. — Ձեր բարեկամը եղող այս պարոնին առնուը կրնամ հասկնալ:

Ֆէ՛ԲՆ. — Տէր իմ, Թօզալիային ամուսինը կը ներկայացնեմ ձեզի:

ՃիԱՆ. — Ահա... ի՞նչ կ'ըսէք, անկարելի է...
Քօզալիային ամուսինը ցմահ բանտարկութեան դատա-
պարառուած է, հիմա, Եփարօլիի բանտը կը գտնուի ան:
ՔՕՐ. — (Շուարած) Դուք որմէ՞ լսեցիք...

ՃիԱՆ. — Արդարեւ, դուք Քօզալիային ամուսինն
էք, բայց զաւակս, շիտակը խօսէ, վախճանիք բան մը
չունիք:

ՖԵՐՆ. — Ամէն պարագայի՝ պիտի աղատենք քեզ,
խօսեցէք, ի՞նչպէս յաջողեցաք յանտէն փախչիլ:

ՃիԱՆ. — Խօսեցէք..., ձեզի համար
նպաստառը պիտի ըլլայ:

ՔՕՐ. — Այո՛, յարգելի հայր, ուրանալը անօգուտ
է, այո՛, ևս բանտէն փախայ:

ՃիԱՆ. — Դուք իմ փափաքիս համաձայն շարժեր
էք, Քօզալիային թշուառ, տիտոր, անոք և անօգնաւ-
կան վիճակը նկատի առնելով և զինքը խղճալով՝ ին-
կած խորխորատէն ազատելու համար: Վեհափառ թա-
գուհին անձնական խօստովանահօր միջնորդութեամբը
պիտի խնդրէի որ ներում չնորհէիք: Մեծ յոյս ունէի
յաջողելու, բայց հիմա ձեր փախուստովը զիտաւորու-
թիւնս ալ աւելի հաստատուեցաւ: Ամէն ինչ մանրա-
մասնաբար սպատմեցէք ինծի, ևս ամէն բանի տեղեկա-
նալ կ'ուզեմ: Զեր աղէկութեանը, ձեր օգտին համար
ձեռքէս եկածը պիտի ընեմ, ամբողջ ձեր կմանքին
ելեւէջներուն տեղեկանալէս յետոյ: Զեր ազատութեանը
համար աւելի համարձակ պիտի աշխատիմ: Վստահ եւ-
զէք որ ձեր գաղտնիքը չպիտի հբապարակենք, մի-
միայն ձշմարտութիւնը խօսեցէք, անկէ ետքը ձեր
ննջասենեակը կը քաշուիք, որովհետեւ հանսփիսափ պէտք
ունիք: Վաղը Քօզալիային պիտի կրնաք այցեւել...

ՔՕՐ. — Ահ, սրտիս վերքերը նորէն պիտի բաց-
ուին, ի հարկէ տօն Ֆէրնանտօ իմ անցեալս սպաս-
մած է:

ՃիԱՆ. — Զաւակս, շատ կցկտուր է պատմածը:

ՖԵՐՆ. — Իմ գիտցածս ալ այդչափ է, ևս միայն
ասչափ գիտէի որ երկու լծակիցներ խօլաբար իրար կը
սիրէիք, Քօզալիին ծնողքը ուզեցին արգելք ըլլալ ձեմ
ամուսնութեան, ձեր կրակոտ բնաւորութեան չհաւնել-
նուն համար, բայց զուք գեղեցիկ լուսնակ գիշերով մը
Քօզալիան հօրը տանէն փախցուցիք և ամուսնացաք:
Իմ գիտցածս այսչափ է, անկէ ետքը ևս Քաթանիայէն
մեկնեցայ, այնուհետեւ պատահած անցուդարձերէն
ընաւ տեղեկութիւն չունիմ:

ՔՕՐ. — Անկէ յեաոյ շտա բաներ սպասահեցան,
ծնողքին ոխը և ատելութիւնը սաստկացած ըլլալուն,
եզրօրը զրզումովք՝ հայրը Քօզալիան փախցնելու որոշ-
չում տուաւ: Ան բարի, յարգելի մարդ մը ըլլալուն,
նախ մտադրեց Քօզալիան ինծի ձգել բոլորովին ու նե-
րել ինծի, բայց երբ Քօզալիա աղջիկ զաւակ մը աշ-
խարհ բերաւ, չուզեց անոնցմէ բոլորովին բաժնուելով
ինծմէ բաժնուիլ: Այն տաեն Ալօնիգօն քոյրը փախցը-
նելու որոշումը տուաւ: Բըրեւ առեւանգիչ, սոորին և
վատ արարած ամբաստանելով ուզեցին զիս ձերբակա-
լել տալ զրպարտութեամբ: Ես ասոնցմէ տեղեկութիւն
ուն՛ի, բայց զորքին վերջաւորութեանը կ'սպասէի:
զիշեր մը, մարդուն մէկը գաղտագողի տուն մտաւ.
ևս նախ և առաջ անկիւն մը կծկուեցայ և այդ ան-
ծահօթ մարդուն ձամբան կտրեցի...: Ահ, Սատուած
իմ, ինչ տեսնեմ... նոյն ինքն Ալօնիգօն էր...: Ամէն
տեսակ յուաներներ, յանովիմանութիւններ ուզեց
ինծի, խիզմա, սիրտս վրզովեցաւ, արիւնս զլուխս
խուժեց, անոր վրան յարձակեցայ ու մէկ հարուածով
սպասնեցի զայն:

ՃիԱՆ. — Իե՛զձ... թշուա՛ռ... արարած, շարու-
նակէ...

ՔՕՐ. — Զիս ձերբակալեցին, արգարութեան յանձ-

նեցին և ցմահ բանտարկութեան դատապարտեցին...: Քննութեան և հարցաքննութեան պետք չմնաց որովհետեւ սպանեալին քովը դտան զիս:

ՃիԱՆ.—Զկրցա՞ր ինքզինքդ պաշտպանել....

ՔՕՐ.—Պաշտպանութեան ի՞նչ պէտք անկէ ի՞նչ օգուտ կրնայի սպասել ևս այնպէս կը փափաքէի որ ամէն մարդ գիտնայ թէ ևս սպաննեցի զայն, այն աշեն արիւնս երակներուս մէջ կեսար, տասնըչորս տարւ բանտարկութիւնս երակներուս մէջ ցամքեցուց այդ արիւնը: Եթէ զուք ալ իմ տեղս ըլլայիք, այդք պէս պիտի ընէիք, այն ատեն քառերութը տարեկան էի. Թօղալիան ձանչցած ատենս թշուառ, բայց երիտասարդ և գեղեցիկ էի: Հիմա ևս դատապարտեալ մըն եմ, սպագային, Թօղալիա ի՞նչպէս պիտի հոգար իր օրապահիկը... կամ մուրացկանութեամբ և կամ խայտառակ կեանք մը վարելով... մտքիս մէջ տպաւորուած էր տափկա, բայց ի՞նչ օգուտ նախանձը սիրտս կը կրծէր ու ամենասոսկալի գաղան մը դարձած էի: Ա՞հ, խեղճ աղջիկս, թշուառ աղջիկս, հազիւ երկու տարեկան, վերջնականապէս ի՞նձմէ բաժնուելու դատապարտեցաւ: Այն ատեն խեղճ աղջիկս տկարակազմ հիւանդ էր: Բանտը եղած ատենս քանի մը անգամ երազիս մէջ աշնոր դագապը տեսայ, ծաղիկներով, վարդերով զարդարուն դագաղ մը, երբեմն մօրը գիրկը, կը տեսնէի, երբեմն ալ փողոցի մը անկիւնը կեցած, փոքրիկ ձեռքերովը անցորդներէն ողորմութիւն խնդրելը կը տեսնէի: Բայց, սոսկալի բան է, Աստուած իմ... գլուխս կ'այշիրի... (բաւական ատեն տխուր կենալէ յետոյ) երբեմն ալ կ'երեւակայէի որ մօրը սիրահարը եղող պարոնին գիրկը կը դտնուի ան, ու ամբողջ մարմնովս կը դողացի: Այս վերջի կասկածս խելայեղ վիճակի մը կը մատնէր զիս....

ՃիԱՆ.—Այո՛... իրաւունք ունիք, կատարելաւապէս կը հաստատեմ... Ճեր ըսածը բայց շարունակեցէք....

ՔՕՐ.—Վերջապէս բանաէն փախչելու որոշում տուի... բայց ծրագիրս չփորձադրած, հիւանդացայ, սոսկալի զլիու պայոյտէ մը բանուեցայ, վերջապէս ուշ զեղային տագնաալ մը: Բանախն տնօրէնը զիս ուրիշ սենեակ մը փոխագրել տուաւ, այդտեղ աւելի օդասուն և բացօթեայ ըլլալուն, մէկ քանի օրուան մէջ կազդուրուեցայ: Այդ սենեակին մէջ աստիճան մը համարձակ էի, ու սկսայ փախուսաի պատրաստութիւն տեսնել: Ամէն օր երկերկու ժամ կ'աշխատէի պատուհաններուն երկաթները քակելու, արիւն քրտինք կը մըտնէի, կարծես նոր ուժ մը եկած էր վրաս և աշխուժ կ'աշխատէի... վերջապէս երկաթները տեղէն հանելով բանախն բակը, հոնկէ ալ զուրսի դաշտը ցատկեցի:

ՃիԱՆ.—Այո՛, այն ատեն Ճեր զգացածը հիմա ևս ալ կ'զգամ:

ՔՕՐ.—Ո՞չ... ինծի պէս չէք կարող զգալ, պէտք է բանտարկութիւն կրած ըլլաք, մանաւանդ տասնըչորս երկար տարիներ, որպէսզի զգաք թէ բանտի խորշերուն մէջ տառապող մարդ մը որքան կը չարչարուի, ընտանիք ունեցող մէկը ի՞նչ աստիճան նեղութիւններու մէջ կը տուայտի... բանտէն փախուստ տալէս ի վեր կարծես թէ նոր կեանք մըն է որ կ'սկսիմ: Գիշերը մինչեւ առաւօտ քալեցի, սեպաձեւ ժայռերէ անցայ, անանցանելի և խորտուբորտ ճամբաներէ, ճորերէ անցայ, վերջապէս առաւօտուն երկար և ընդարձակ անտառի մը մէջ ինքզինքս կորսնցուցի. այդ անտառին մէջ բարի ծերունիի մը հանդիպեցայ, որ այս հագուստները տուաւ ինծի, ուրիշ հարուստ մէկն ալ ինծի զրամ տուաւ: Այսպէս Ապէնինեան լիռներու նեղ կիրածներէն անցնելով, վերջապէս հոս հասայ:

ՃԻԱՆ. — Բախտը ընտանիքից զիրկը նետեր է քեզ:
ՖԵՐՆ. — Համարձակութիւն ունեցէք, բարեկամու:

ՔՕՐ. — ԱՇ... ես առաջները շատ համարձակ էի,
բայց այժմ կարողութիւնս և ուժս սպառած են: ԱՇ,
աղջկոս բժիշկին տունը չփանուիր, ահա՛ աս է որ իմ
մահուանս պատճառ պիտի ըլլայ,

ՃԻԱՆ. — Չեր խօսքը Սթափ մասին է, սպասեցէք,
ո՛չ, ո՛չ, ձեր խօսքէն յայտնի կ'ըլլայ որ, ան հիմա
տասնըվեց տարեկան ըլլալու է...:

ՔՕՐ. — Այո՛... յարգելի հայրս, ճիշտ տասնըվեց
տարեկան է:

ՃԻԱՆ. — Բօդալիային ուստուցչութիւն ընկը,
աղջկանը տարիքն ալ տասնըվեց տարուան է, միմիայն
նկատի առնելիք կէտը՝ բժիշկ Բալմիէրին աղջկանը
մահուան պարագան է.

ՖԵՐՆ. — Իրա՞ւ կ'ըսէք:

ՃԻԱՆ. — (Գրասեղանին մօտենալով) Ահա՛ անոր
մահուանը սպացոյցը, ահա վկայականը. ես բժիշկին
ալ ցոյց տուի ասիկա, բայց...

ՔՕՐ. — Այդ աղջկանը մայրը ո՞վ է...:

ՃԻԱՆ. — Անիկա...

ՔՕՐ. — Զենէ կը խնդրեմ... կը պաղատիմ, ձեր
նուիրական պաշտօնին բերմամբ ձշմարտութիւնը ըսէք:

ՃԻԱՆ. — Աստուած իմ, մէկու մը գէշութիւնը չեմ
ուզեր և մինչեւ հիմա ալ չեմ ուզած...: Բժիշկին աղ-
ջկը համարուած այդ օրիորդը Սթան չէ միթէ:

ՔՕՐ. — Սթան, իմ աղջկոս Սթան, ուրիշ մէկը
անծանօթ մը հայր կոչէ, ուրիշ մէկը իբրեւ հայր սի-
րէ, ըսել է երեւակայութեանս մէջ չեմ սխալած:

ՃԻԱՆ. — Չեր աղջիկը ըլլալը հասկնալու համար,
անոր վրայ որոշ նշաններ կա՞ն...:
ՔՕՐ. — Ի՞նչ նշան կրնան ըլլալ, ի՞նչպէս քիչ մը
առաջ ձեզի բացատրեցի, անկէ հեռացած տաենս հազիւ
երկու տարու էր...:

ՃԻԱՆ. — Բօդալիան կրնաք հարցափորձել, ամէն
պարագայի՝ ձշմարտութիւնը պիտի խոստովանի ան:
Պէտք է որ դուք պաշտպանէք ձեր իրաւունքը...:

ՔՕՐ. — Իմ իրաւունքս... ա՛հ, չեմ գիտեր, մի-
միայն սաշափը ըսեմ որ Բօդալիան գտնելու և տեսնե-
լու համար ամէն ջանք թափեցի, սակայն հիմա այս
եղելութիւնը ձեզմէ լսելէ յիտոյ՝ սէրս ատելութեան
փոխուեցաւ, այլեւս կ'ատեմ՝ զայն, չեմ ուզեր տես-
նել, այլեւս բանտ պիտի վերադառնամ:

ՃԻԱՆ. — Բայց, ի՞նչո՞ւ համար...

ՔՕՐ. — Զեմ գիտեր...:

ՖԵՐՆ. — Համարձակ եղիք, ուժդ ամփոփէ՛, Քօր-
րատօ, հանգատանալու պէտք ունիս:

ՃԻԱՆ. — Անհոգ եղիք, հիմա Ֆէրնանտօ պէտք
եղած հրամանները կուտայ ձեր հանգատութեան համար,
վաղը առտու, Աստուած ողորմած է:

ՔՕՐ. — Սրդարութիւն...: Սրդարագա՞տ Աստ-
ուած... զիս հոս առաջնորդողը Աստուածային արդա-
րութիւնն է թէ հանդիպումը... ասիկա վաղը պիտի
հասկնանք (առն Ֆէրնանտօյի հետ ուզի կ'ելլեն):

ՃԻԱՆ. — (Առանձին) Այո՛, վաղը... վաղը աւելի
հանգիստ պիտի ըլլաս... աւելի ուժ պիտի ունենաս և
մենք... է՛հ... պարոն բժիշկ... ձեզի հետ վաղը...
վաղը կը տեսնուինք...

(Վարագոյրը կ'իջնէ)

ԱՐԱԲ Բ.

(Դարձեալ բժիշկին տունը, առաջին արարուածին
տեսարանը)

ՏԵՍԻԼ Ա.

ՃԻՍՆԻՆԾ, ՌՈԶԱԼԻԱ

Ո.0.ԶԱ. — Փափաքեր էք զիս տեսնել, պատրաստ
եմ ձեր հրամաններուն, բայց պարոն բժիշկին հետ կը
փափաքիք տեսնուիլ:

ՃԻՍՆ. — Տօն Ֆէրնանտո անոր հետ արդէն պէտք
եղածէն առելի տեսնուեր է: Երէկ ցերեկ ալ մենք
տեսնուեցանք:

Ո.0.ԶԱ. — Այո՛, տեղեկութիւն ունիմ:

ՃԻՍՆ. — Այսուհետեւ չպիտի հարցափորձեմ ձեզ,
որովհետեւ գուք այլեւս ասկէ պիտի մեկնիք...:

Ո.0.ԶԱ. — Այո՛... շնորհակալ եմ... բարերարիս
այս առունէն զուրս ելլելու, պաշտօնիս վերջ արուե-
լու մասին հրամաններ արձակեր էք, այս մա-
սին ես կրնայի բուն տեղը դիմել և զանգատիլ ձեր
մասին... կրնամ ձեր երեսին զարնել ձեր լարած թա-
կարդը: Դուք կրնաք կռահել պատուաւոր կին մը ըլ-
լալս, այո՛, երեսս նայելու համարձակութիւնը անդամ
չունիք, սակայն ես համարձակ կրնամ նայիլ ձեր աշ-
քերուն մէջ, այս յաղթութիւնը ինձի կը բաւէ, մնա՞ք
բարով:

ՃԻՍՆ. — Կրնաք երթալ... բայց մինակ չպիտի
կրնաք երթալ...

Ո.0.ԶԱ. — Ո՞վ պիտի ընկերանայ ինձի:

ՃԻՍՆ. — Ամուսինդ, տիկին... ամուսինդ:

Ո.0.ԶԱ. — Ա՛ն, ո՛չ, ո՛չ, անկարելի է աս, խընդ-
րեմ, կատակը մէկզի թողէք:

ՃԻՍՆ. — Աղջիկս, պէտք է զիտնաս որ իմ աս-
րիքս և պաշտօնս ունեցող մէկը կատակ չի կրնար ը-
նել, և թէ չի վայեր...

Ո.0.ԶԱ. — Ամուսին ո՛ւր զանուիլը ինչ լաւ զի-
տէք, բախար իմ զէմս հաներ է զայն, բայց զոհու-
թիւն Աստուծոյ որ կանուխէն ազատեցայ:

ՃԻՍՆ. — Կը սխալիք, աղջիկս, ան ձեր ամուսինն
է տակաւին, առանց քեզի չի կրնար ապրիլ... իր
ուաքերուն շղթանները քակելու յաջողեր է, ատոր համար
չէ՞ք ուրախանար միթէ: ամուսինդ երէկ իրիկուընէ
ի վեր ինձի հիւր է:

Ո.0.ԶԱ. — (Զարմացկոտ) Քօրրատօ՛... ա՛ն, ան-
կարելի է, ո՛չ, ո՛չ, անկարելի է, ես բնաւ չեմ հա-
ւատար:

ՃԻՍՆ. — Ասանկ խնդիրներ կատակ չեն վերցներ:

Ո.0.ԶԱ. — Քօրրատօ հո՞ս, բայց ի՞նչպէս կ'ըլլայ,
ի՞նչու... հոս ո՞վ փնտուել եկեր է:

ՃԻՍՆ. — Իր կինը կը փնտոէ:

Ո.0.ԶԱ. — Ի՞ր կինը:

ՃԻՍՆ. — Այո՛, իր կինը, բայց ձեր լնթացքը,
ձեր գժգոնութիւնը զար օ՞նիք կը պատճառեն ինձի,
անոր անունը ձեզի վար պատճառէ, զզուանք
կ'ազդէ: ես կարծեցի թէ անոր անունը տալով ձեզի
ուրախութիւն և սփոփանք պիտի պատճառէի: բայց
ընդհակառակը զուք արտմեցաք, փոխանակ ժամ առաջ
զայն տեսնելու և գրկելու, անկէ հեռու փախչելու մի-
ջոցներ կ'որոնէք: Ասանկ խնդիրներու մէջ շատ կիներ
իրենց շնորհակալութիւնը կը յայտնէին ինձի, իսկ դուք:

Ո.0.ԶԱ. — Այո՛, բաց ի ինձմէ...:

ՃԻՍՆ. — Աղջիկս, ի՞նչեր կ'ըսէք առանց խօս-
քերնիդ կշուելու...:

ՈՒԶԱ. — Դուք ալ զիս կը յանդիմանէք և կը դատապարտէք, այնպէս չէ^o, ամէն իրաւունք ունիմ զայն ըլնդունելու:

ՃԻԱՆ. — Տեղեկութիւն ունիմ որ Քօրրատօն ձեր եղբայրը սպաննած է, բայց և այնպէս...

ՈՒԶԱ. — Այդպիսի վայրագ ոճրագործ մը իրեն ամուսին կրնամ ընդունիլ այսուհետեւ... ո'չ, ան կարելի է, պարո՞ն... այս բանին ոչ սիրաս և ոչ ալ խղձի խայթս կը թոյլատրեն...:

ՃԻԱՆ. — Այո՞... օրէնքը, արդարութիւնը և խղձի խայթը ձեզ կ'արգիլեն, բայց անկէ ետքը առաջըորս երկար տարիներ անցած են, իր կեանքը բանատին խորշերը անցուցած և ի հարկէ հիմա զղջացած ու զգաստացած է, դուք ալ այս երկար տարիներու ընթացքին, առանց ամուսնի, միս մինակ մնացիք, այո՞, աղջիկս, ամէն պարագայի՛ պէտք է ամուսնիդ միաւնաս, և պատուաւոր կեանք մը վարես, փոխանակ մինակ մնալու, անբարոյսւթեան, և զարշելի ցեխի մէջ թաթխուելու համար:

ՈՒԶԱ. — Փոխանակ կենակցելու ես աւելի լաւ կը համարեմ անբարոյ կեանք մը վարել:

ՃԻԱՆ. — Ասով մեկտեղ, ազատ էք ձեր որոշմանը մէջ, բայց չէ^oք զիտեր որ Քօրրատօն սոսկալի նախանշ ձոս և վասնդաւոր մարդ մըն է:

ՈՒԶԱ. — Բաել է բռնի իր հետ պիտի՝ տանի զիս:

ՃԻԱՆ. — Զեզի հանդէպ ունեցած անոր բուռն ոէջ բատձառ եղած է որ բանաէն խոյս տայ, դուք ալ պէտք է որ իր քովը երթաք:

ՈՒԶԱ. — Պարոն, խնդրեմ սարսափազգեցիկ խօսքեր մի ընէք:

ՃԻԱՆ. — Ամուսինդ ոչ մէկէն կը վախոնայ. հոս անիկտ մէկը չի ճանչնար, ձեռքէն եկած աշխատութիւնը չպիտի խնայէ, զայն ազատելու համար: Այս

տեղէն ուրիշ քաղաք մը երթալով՝ հանգիստ և երջանիկ կրնաք ըլլալ, խօսեցէք, խրամներու պիտի հետեւիք:

ՈՒԶԱ. — (Պահ մը մտածելէ ետքը) Ո'չ, ո'չ, անկարելի է, պարոն:

ՃԻԱՆ. — Զգուշացէ՛ք, աղջիկս, որովհետեւ կրնայ ըլլալ որ ինքը հոս զայ հեռու տեղ մը չի գանուիր:

ՈՒԶԱ. — Ա'հ... ի՞նչ կ'ըսէք... ՃԻԱՆ. — Պիտի ստիպուիս անոր հարցումներուն պատասխանել, ո՞վ է այն աղջիկը, պկափկ Աթան ի՞նչ եւ դաւ...

ՈՒԶԱ. — (Ծփոթած) Աթա՞ն, ո՞հ Աստուած իմ:

ՃԻԱՆ. — Ի հարկէ, ան իր աղջկան անունը բերնէն բնաւ ձգած չունի, միշտ անոր վրայ կը խորհի, շատ կը սիրէ զայն... է՞հ, առաջուց ձեզ պատրաստեշատ համար շատ գոհ եմ, հիմա ձեր խիզձը հանդարւու համար, քանի մը վայրկեան միայն ունիք, զատաւորի մը նման պիտի հարցաքննէ ձեզ, ի՞նչ որ իր իրաւոնքն է: Մնաք բարով...

ՈՒԶԱ. — Ի՞նչ պիտի բաէք անոր:

ՃԻԱՆ. — Պիտի ըսկմ թէ կը փափաքիք իրեն հետ տեսնուիլ:

ՈՒԶԱ. — Ո'չ... ո'չ... հոս թող չզայ, ըսէ՛ք որ չզայ, վերջաւորութիւնը շատ զէշ պիտի ըլլայ:

ՃԻԱՆ. — Ինձի հրամայելու իրաւունք չունիք. ես ձեր երկուքին երջանկութեանը համար պէտք է աշխատիմ... ասիկա ընդունեցէ՛ք և ինքզինքնիդ պաշտպանեցէ՛ք... (զուրս կ'կլլէ):

ՈՒԶԱ. — Քօրրատօն... Քօրրատօն... ա'հ, արդեօք երա՞զ է որ կը աեսնեմ, այն եղերական զիշերէն յետոյ, ո՞հ, Աստուած իմ անկարելի է որ աեսնեմ զայն, այո՞... շատ մը եղելութեանց մասին պիտի հարցաքննէ զիս, աղջկանը համար ի՞նչ պիտի պատասխանեմ. (Եմմա ներս կը մտնէ)

ՏԵՍԻԼԻ.

ՈՒԶԱԼԻԱ. և ԷՄՄԱ.

ԷՄՄԱ.— (Մօտենալով) Պօղալիս... ի՞նչ ունիք,
ի՞նչու այդչափ տխուր էք:

ՈՒԶԱ.— Բան մը չունիմ աղջիկս:

ԷՄՄԱ.— Դուք այսօր ամէն օրուընէ տարբեր,
յուսահատ վիճակ մը ունիք... այսօր ձեր համբոյրին
արժանի չպիտի ըլլամ արդեօք, (Պօղալիս իմման կը
համբուրէ), ա՛ն, դուք կ'արտասուէք, ի՞նչ է ձեր
տրամութեան պատճառը որ այդպէս մելամաղձոսու-
թեամբ երեսս կը նայիք, արդեօք զեղներ եմ և կամ
հիւանդութեան նշան մը կը տեսնէք:

ՈՒԶԱ.— Ո՛չ, բան մը չունիք, աղջիկս:

ԷՄՄԱ.— Ի՞նչ կայ, հայրս ալ քանի մը օրէ ի վեր
տրառում վիճակ մը ունի, Սաստուած իմ արդեօք ի՞նչ
պատահեցաւ. միթէ յանցանք մը դորձած եմ:

ՈՒԶԱ.— Ոչ, աղջիկս, ո՛չ, դուք անմեղ հրեշտակ
մըն էք, ոչ մէկ յանցանք ունիք:

ԷՄՄԱ.— Թերեւս կը գուշակէք որ ձեր զլխուն
գալիք վտանգ մը կայ, կը խնդրեմ, ըսէք ինծի, կ'ու-
զեմ հասկնալ ձեր սարսափին պատճառը:

ՈՒԶԱ.— Վտանգ, չեմ կարծեր, ա՛ն սիրելի աղ-
ջիկս, դուք հայրերնիդ շատ կը սիրեք այնպէս չէ... .

ԷՄՄԱ.— Սառը տարակոյն կայ միթէ... հօրս
նկատմամբ ունեցած սէրս աննկարազրելի է... (Պօ-
ղալիս զրկելով կը համբուրէ և դուքս կ'ելլէ)

ՏԵՍԻԼԻ. Գ.

ՅՈՐԻՌԱԾՈ և ԷՄՄԱ.

ՔՕՐ.— (Դրան սեմին վրայ կենալով) ան ո՞ւր է,
ինծի հետ տեսնուիլ չուզեր եղեր. (մտնելով) աղջիկ մը,
կարելի է իր աղջիկն է. (կմմա օտարական մը տեսնե-
լով սոսկումով կը փախչի)

ԷՄՄԱ.— Ա՛ն, օտարական մը, դուք ո՞վ էք,
ինձմէ ի՞նչ կ'ուզէք, հօրս հետ տեսնուիլ կ'ուզէք...

ՔՕՐ.— Ո՞վ է ձեր հայրը:

ԷՄՄԱ.— Այս քաղաքին բարերարն է, ամէնուն
բարիք ընել կ'աշխատի, անունն ալ բժիշկ Արրիքօ
Բալմիէրի է:

ՔՕՐ.— Բալմիէրի... :

ԷՄՄԱ.— Դուք չէք ճանչնար դայն:

ՔՕՐ.— Կը փափաքիմ իրեն հետ տեսնուիլ:

ԷՄՄԱ.— Ցետո՞յ:

ՔՕՐ.— Ոչինչ:

ԷՄՄԱ.— Ա՛ն, ինծի մի մօտենաք:

ՔՕՐ.— Ի՞նչու:

ԷՄՄԱ.— Աչքերնիդ վտանգաւոր կերպով կը փայ-
լի, խնդրեմ, ինծի մի նայիք:

ՔՕՐ.— Թոյլ տուէք որ երեսնիդ նայիմ, որովհե-
տեւ աղջկանս և ձեր զէմքը իրարու կը նմանին:

ԷՄՄԱ.— Դո՞ւք ալ աղջիկ ունիք, ուրեմն ձենէ
չեմ վախնար, հայր մը բնառ չուզեր աղջկան գէշու-
թիւն ընել:

ՔՕՐ.— Իրաւոննք ունիս, աղջիկս, եթէ իմ աղ-
ջիկս ալ հօս ներկայ գտնուէք, շատ գոհ պիտի մնայի:

ԷՄՄԱ.— Զեր աղջիկը կորսուեցա՞ւ:

ՔՕՐ.— Այս՝, օրիորդ, բայց յուսամ թէ պիտի

գտնեմ զինքը, եթէ դեռ կ'ապրի, (ուշադրութեամբ
կմման կը դիտէ) աղջիկս, ձեր անունը կրնամ գիտնալ:

ԷՄՄԱ. — էմմա է:

ՔՕՐ. — էմմա . . . :

ԷՄՄԱ. — Բայց ինչո՞ւ կը խորչիք այս անունէն:

ՔՕՐ. — Եթէ ձեր անունը Աթա եղած ըլլար, ա՛ւ
աւելի աղէկ կ'ըլլար:

ԷՄՄԱ. — Ինչո՞ւ:

ՔՕՐ. — Որովհեանւ իմ աղջկանս անունն է, այս
անունով աղջիկ մը կը ճանչնա՞ս:

ԷՄՄԱ. — Ո՛չ, այդ անունով մէկը չեմ ճանչնար:

ՔՕՐ. — Մայրդ ալ չի ճանչնար:

ԷՄՄԱ. — Իմ մայրս մեռած է:

ՔՕՐ. — Մեռած է:

ԷՄՄԱ. — Ծնած ժամանակս մայրս մեռեր է:

ՔՕՐ. — (Ինքնիրեն) սոսկալի ստախօսութիւն Աստ-
ուած իմ, ահա կասկածներս կ'իրականան, Աթան մեռ-
ած, բժիշկին զաւակն ալ մեռած, այս աղջիկը ո՞րունն
է արդեօք: Այս', Թօղալիային աղջիկն է, (կը մօտենայ)

ԷՄՄԱ. — Բայց դուք զիս կը վախցնէք:

ՔՕՐ. — Մի՛ վախնար, աղջիկս:

ԷՄՄԱ. — Քու աչքերգ վախ կ'ազգեն ինծի:

ՔՕՐ. — Աչքերս ամէն ատեն ահարկու չեն, եր-
բեմն սիրոյ փայլակներ կ'արձակեն, և արտասուքի
կաթիլներ կը սահին, երբեմն ալ շատ կծու կ'ըլլան,
երեսս նայեցէք, աղջիկս:

ԷՄՄԱ. — Դուք քիչ առաջ հօր մը բարի ըլլալը
յայտնեցիք, ու ըստք թէ հայր մը բնաւ իր աղջկան
գէշութիւն չըներ:

ՔՕՐ. — Ես հիմա Աթա անունով պիտի կանչեմ
քեզ, դուք ալ հայր կոչեցէք զիս, ձեր հայրը կ'ուզեմ
ըլլալւ (կը մօտենայ)

ԷՄՄԱ. — Դուք իմ հայրս, ա՛հ: (կը նուազի)

ՔՕՐ. — Աստուած իմ, օգնութիւն, (Քօղալիս կը
մտնէ):

ՏԵՍԻԼ. Դ.

Եոյն անձնիք և ՔՕԶԱԼԻԱ.

ՈՒԶԱ. — (Քօրրատօի չնայելով) ա՛հ, աղջիկս ի՞նչ
եղար, (Քօրրատօն կը ահանէ ու էմման գրկելով դուրս
կը հանէ և գարձեալ կը վերադառնայ):

ՔՕՐ. — Թօղալիս . . . Թօղալիս . . . (Ճեռքերով երե-
սը կը ծածկէ) ես ստուեր մը չեմ, ես ուրուական չեմ,
ինձմէ ինչո՞ւ կը սոսկաք . . . այդ աղջկան հետ տեսնե-
լով զիս, ինչո՞ւ վախցաք . . . իմ աղջիկս է ան, ներ-
քին ճայն մը ինծի կ'ըսէ թէ քու աղջիկդ է ան, ու
ես ալ այնպէս կը կարծեմ:

ՈՒԶԱ. — Աթան կարծեցի՞ր . . . ա՛հ . . . դուն յիմար
ես . . . միթէ չըսաւ թէ իր անունը էմմա է:

ՔՕՐ. — Այս', ըսաւ . . .

ՈՒԶԱ. — Բժիշկին աղջիկն է ան:

ՔՕՐ. — Դո՞ւն ալ այնպէս կը հաստատես:

ՈՒԶԱ. — Այս', ստիպուած եմ ճշմարտութիւնը
ըսելու . . .

ՔՕՐ. — Ա՛հ . . . ստորին, ստախօս կին, բժիշկին
աղջիկն է, անոր բուն և օրինաւոր աղջիկը մեռած է.
և շատոնց մեռած, ոչ թէ անոր, այլ իմ աղջիկս է ան:

ՈՒԶԱ. — Անոր մայրը չեմ ճանչնար, ես վերջին
ստորիձան աղքատութեան և թշուառութեան մատնուա
էի, այդ միջոցին ինծի յանձնեցին այդ աղջիկը, որ-
պէսզի զայն խնամեմ, և անոր ուսուցչուհին ըլլամ:
ես ի՞նչ իրաւոնք ունիի անոր ծննդեան վկայականը
պահանջելու, իր հօրը հարցուցէք:

ՔՕՐ. — Շատ աղէկ, բայց Աթան ո՞ւր է, ի՞նչ ը-
րիք զայն:

ՈՒԶԱ. — ԱՇ, ի՞նչպէս ըսկեմ, անիկա մեռաւ:
ՔՕՐ. — ՄԵռա՛ւ . . .

ՈՒԶԱ. — Այո՛, մեռաւ, ևս ամէն բանէ զբրակուած, թէ՛ զայն և թէ ինքզինքս ապրեցնելու անկարող էի, թշուառութեան և աղքատութեան չղիմաշնալով մեռաւ ան:

ՔՕՐ. — Դուն մայր պիտի ըլլաս: Անէ՛ծք քեզի, աղջկանդ մահուան լուրը այս աստիճան պաղարիւնութեամբ ինծի կ'իմացնես, քու խօսքերուդ չեմ հաւատար, անոր մահուան վկայագիրը ո՞ւր է:

ՈՒԶԱ. — Քաթանիսէն կրնաք սառուգել, այդ խնդրոյ մասին իմ վրաս ճնշում բանեցնելու իրաւունք չունիք . . . դուն մէկը երեսի վրայ թողուցիր քու առարքովլու . . .

ՔՕՐ. — Լքեցի՞ միթէ: Ինչո՞ւ համար վիրաւորիչ խօսքեր կ'ընես, տասնըշորս տարի շարունակ ամէն փորձանքներու համբերեցի, բայց յոյս ունէի որ քեզ պիտի գտնէի, անպատճառ կ'ուզէի աղջկս տեսնել և գրկել, ահա՛ այդ յոյսով առաւօտէն մինչեւ իրիկուն լեռներէ, բլուրներէ, ձորերէ, ձահիճներէ և մացառուտ անեանցանելի ձամբաներէ անցնելով հոս եկայ, քեզի հոգւով մարմնով՝ սիրելս լու գիտես, բայց, աւա՛զ, ո՛րքան սխալեր եմ, ո՛հ, ո՛րքան զգբախտ մարդ եմ. ձեր զիմապիծը վայրկեան մը աչքիս առջեւէն չէր վրիպեր, միշտ ձեր վրայ մտածելով կը տառապէի, ահա՛ եկայ զտայ քեզ, եկուր զիս մի լքեր, ինծի հետեւէ, միասին մեկնինք ասկէ, որովհետեւ առանց քեզի չեմ կարող ապրիլ:

ՈՒԶԱ. — Քեզի հետ միասին գամ . . . ո՛չ, ո՛չ, անկարելի է ատ, կը ցաւիմ ձեր վիճակին վրայ, դուն այդ գարշելի ոճիրը գործած պահուդ մեզ մտածեցի՞ր, միաքէդ աղջիկդ չանցուցիր բնաւ. դուն վայրագ, սոսկալի ոճրագործ մըն ես . . . եղբայրս սպաննեցիր . . . ես

քեզմէ կը խորշիմ. և մինչեւ վերջն ալ չեմ ուզեր որ քու երեսդ տեսնեմ:

ՔՕՐ. — Խնդրեմ, եղբօրդ անունը մի՛ տար, անոր խօսքը մի՛ ըներ, անոր վրէժը տակաւին սրտիս մէջ կը վասի, եղբայրդ ինձմէ ամէն բան կորզել ուզեց . . . և բնաւ զջացած չեմ զայն սպաննելուս համար:

ՈՒԶԱ. — Չեմ ուզեր ձեզի հետ վիճաբանիլ, բայց լաւ գիտցէք որ յանցաւորի մը խիզմը մինչեւ վերջը հանգիստ չպիտի մնայ, մինչեւ անգամ զաւակներուն ալ կը փոխանցէ, ինծի մօտենալու համար բանաէն փախար, բայց բնաւ չպիտի կրնամ եենակցիլ ձեզի հետ.

ՔՕՐ. — Օրէնքը այդպէս չի տրամաբաներ:

ՈՒԶԱ. — ԱՇ, օրէնքէն կը ձառէք, խիզմն ալ օրէնք մը չէ՞ միթէ:

ՔՕՐ. — Շատ աղէկ, ուրեմն գուն ալ քու խղճիդ հարցո՞ւր . . . մարդիկ իբր յանցաւոր կը գատապարտեն զիս, բայց ես յանցաւոր չեմ, անունս արատաւորեցի, բայց վստահ եղէք որ ասկէ ետք անունիս արատը սրբել պիտի ջանամ և վարքս պիտի ուզզեմ, քու ուզած, վափաքած վայրդ պիտի երթամ:

ՈՒԶԱ. — Քօրրատօ, Քօրրատօ, անցեալը միտքդ բե՛ր . . . հիմա ալ հանգիստ խոռվելու եկա՛ր:

ՔՕՐ. — Էսել է քեզմէ հետանալս կ'ուզէք, այսուցեալ այս տանը մէջ չեմ կրնար ձգել զեզ, ո՛չ, ո՛չ, անկարելի է, սիրտս այդ բանը չի տանիր, եթէ իմ գէշ մարդ մը ըլլալէս կը վախնաս . . . դուն ալ ինծի մեղսակց ես . . . որովհետեւ կինս ես:

ՈՒԶԱ. — ԱՇ, Քօրրատօ, ի՞նչեր կ'ըսէք:

ՔՕՐ. — Շատ կանուխէն զիս մոոցեր ես, սիրտուրիշի մը տուեր ես . . . եթէ շարունակես այդ գաղտնիքը ինձմէ պահել, և եթէ ինծի հետ գալու որոշում չտաս, գիտցած ըլլա՛ս որ հանգիստդ ու երջանկութիւնդ վրայ կուտաս:

ՈՒԶԱԾ. — Ա՛հ, իմ երջանկութիւնս... ո՞հ, Սատուած իմ, շատ լաւ գուշաք այնպէս կարծեցէք, և կրնաք կասկածներ անցընել միտքերնուդ, աղքատութեան և թշուառութեան մէջ առայտով կին մը, միշտ զրպարթեան հնթակայ կ'ըլլայ, բայց ես ամուսին ունենալով հանգերձ, իմ պատովս կ'ապրէի առանձին։ Սակայն ամէն մարդ անբարոյական և անպատիւ կը համարէր զիս, ու ես ստիպուեցայ սպասուհի ըլլալ։ Հիմա ալ գուշաք այդ մարդոց նման զիս կ'ամբաստանէք իրը անպատիւ, այնպէս չէ։

ՔՕՐ. — Էնդհակառակը, ես պատիւդ վերադարձնեւ լու և քու վրագ նետուած ցեխը մաքրելու փափաք կ'զգամ։ Սատուծոյ սիրոյն, եկէք ասկէց մեկնինք... դեռ բժիշկին չհանդիպեցայ, բայց եթէ ուզէք, սոսկալ և վտանգաւոր կացութենէն կրնաք փրկել թէ բժիշկը և թէ զիս։

ՈՒԶԱԾ. — Բաել է այդ պատուաւոր մարդուն գէշութիւն մը ընելու միտք ունի՞ք։

ՔՕՐ. — Երբեք, բայց դուն ի՞նչու աւելի փայլ կուտաս կրակին, ինչո՞ւ զիս կը զրպուս, ես մէկուն գէշութիւն ընել չեմ ուզեր, բայց հիմա ձեռքս չէ... (անյօյս) Բօղալիա եկէք, ասկէ երթանք։

ՈՒԶԱԾ. — Ա՛հ, խղճացէ՛ք գթութիւն, գթութիւն, Քօրքատօ, (բժիշկ Բալմիէրի դրան սեմը կ'երեւայ)

ՏԵՍԻԼ Դ.

Նոյն անձերը և Բալմիէրի

ՔՕՐ. — Ինքն է, բժիշկ Բալմիէրի։

ՔԱԼՄԻ. — Այո՛, եմ, բայց դուք ո՞վ էք։

ՔՕՐ. — Բօղալիաին ամուսինը, եկած եմ զայն հետո տանելու։

ՔԱԼՄԻ. — Քօրքատօ... (զարմացած)

ՔՕՐ. — Այո՛, Քօրքատօ, երկուքնիդ հարցափորձելու իրաւունքին մէջ գտնուող Քօրքատօն։

ՔԱԼՄԻ. — Կրնաք հարցափորձել։

Վարագոյր կ'իշեն

ԱՐԱՐ Դ.

(Առաջին վարագոյրի տեսարանը)

ՏԵՍԻԼ Ա.

ՔՕՐՔԱՏՕ, ՏՕՆ ՖԵՐՆԱՆՑՕ

ՔՕՐ. — (Գրասեղանին առջեւ նստած) Սիրելի բարեկամս, խնդրեմ, մինակ ձգեցէք զիս։

ՖԵՐՆ. — Բայց սիրելիս, ձեր տեսակցութեանը մասին բան մը չպիտի՞ ըսէք, ես ամէն բան իմանալ կ'ուզեմ, մօրեղբայրս ալ կ'ուզէ իմանալ ձեր տեսակցութեան արդիւնքը։

ՔՕՐ. — Ես ալ չեմ գիտեր, ի՞նչ պատասխանեմ ձեզի, ես ալ այս տեսակցութենէն բան մը չհասկցայ։

ՖԵՐՆ. — Բօղալիան չտեսա՞ք։

ՔՕՐ. — Այո՛, տեսայ։

ՖԵՐՆ. — Ի՞նչ բառ ձեզի։

ՔՕՐ. — Շատ բաներ... բայց ես մէկ բան միայն կրցի հասկնալ։

ՖԵՐՆ. — Ի՞նչ բան կրցիք հասկնալ։

ՔՕՐ. — (Սիրել ցուցնելով) անիկա հոս պահուած է։

ՖԵՐՆ. — Հոսկէ դուրս չելեր միթէ։

ՔՕՐ. — Ո՛չ, մինչեւ որ կտոր կտոր շըլլայ՝ դուրս չելեր։

ՖԵՐՆ. — Եթէ այսպէս է, ա՛լ բան մը չեմ հարցըներ, բայց աղջիկդ ի՞նչ եղած է:

ՔՕՐ. — Իմ աղջիկս . . . :

ՖԵՐՆ. — Այո՛, բուն խնդիրը հոտ է, անիկա տեսա՞ք, երեսը կրցա՞ք նայիլ . . . :

ՔՕՐ. — Այո՛ . . . :

ՖԵՐՆ. — Զեր վրայ ի՞նչ աղջեցութիւն գործեց:

ՔՕՐ. — Իմ վրաս ունեցած անոր աղջեցութիւնն ալ անկարելի է բացատրել բարեկամս, ևս ջանացի թէ համբուրել, սրախ վերայ սեղմել և միանգամայն վիրաւորել դայն:

ՖԵՐՆ. — Բայց ի՞նչո՞ւ:

ՔՕՐ. — Իրաւունք ունէի:

ՖԵՐՆ. — Էսկէ թէ դուք բան մը չէք կուհեր:

ՔՕՐ. — Հիմա այս մասին բժիշկէն բացատրութիւն պիտի պահանջեմ, անոր գալուն կ'սպասեմ: Ուստի բարեկամս կը խնդրեմ մինակ ձգեցէք, երբորդ անդամ ըլլալով ձենէ կը խնդրեմ:

ՖԵՐՆ. — Շատ լաւ, բայց դուք միաքերնիդ ամփոփեցէք, պէտք եղածին չափ զգուշութեամք վարուելով էք . . . եկած պահուս վարը հանդիպեցայ ձիւոր մարդոց, որոնք չորս կողմը կը խուզարկէին:

ՔՕՐ. — Դարձեալ զիս ձերբակալելու եկած են, այնպէս չէ, բայց ես մինչեւ հիմա կնոջս և աղջկանս համար կ'ապրէի, ապա թէ ոչ շատ զիւրին էր բանտին քարերուն վրայ ինքզինքս կտոր կտոր ընել, հիմա մէկ միջոց մը ունիմ . . . ան ալ մէկ վայրկեանի բան է . . . անկէ վերջը:

ՖԵՐՆ. — Պարապ բաներու վրայ կը մտածէք . . . Դուք վրէմինդիր ըլլալու իրաւունք չունիք . . . լաւ մտածեցէք, բարեկամս . . .

ՔՕՐ. — Այս վայրկեանին՝ երկուքն ալ փճաթը նելու եմ . . .

ՖԵՐՆ. — Խնայեցէք Թօղալիային, ան չքեց ձեզ. տասնըինը տարեկանին՝ բախտը հարուածեց և ձենէ զատեց զայն, եթէ դուք ըլլալիք անոր տեղը, ի՞նչ պիտի կրնայիք ընել:

ՔՕՐ. — Այո՛, ձեզ համար շատ զիւրին է այսպէս մտածելը, որովհետեւ, բայց ի՞նչո՞ւ չեկաւ ան:

ՖԵՐՆ. — Հիմա ո՞ւր որ է կուգայ, համբերէ՛, բարեկամս, կարելի է ձեզի ամէն բան կը պատմէ, և այն ատեն դուք . . .

ՔՕՐ. — Անոր խօսքերուն ականջ չեմ տար, բայց խնդրեմ զիս առանձին ձգեցէք, որպէսզի երկու վայրկեան մտածելու միջոց ունենամ:

ՖԵՐՆ. — Շատ աղջէկ, մտածեցէք, և համարձակ եղէք. (ձեռքը սեղմելով՝ դուրս կ'ելլէ)

ՔՕՐ. — (Առանձին) Անէկ վրէժ լուծելու իրաւունք չունիմ, ասոր վրայ մտածելն իսկ տեւորդ է, Թօղալիա ինձի չէր սպասեր, և իմ վերագարձիս չէր փափաքեր, որովհետեւ հոս գոհ և հանդիսա է, սիրոն ալ անոր առեր է. ա՛լ ի՞նչ պիտի ընէ զիս, ի՞նչ պէտք պիտի ունենայ ինձի՝ (բժիշկը տեսնելով) ա՛հ, վերջապէս եշտաւ, ա՛հ, Աստուած իմ, դուն ինձի օգնական եղիր:

ՏԵՍԻԼ Դ.

ՔՕՐԻՍՏՈ և ԲԱԼՄԻԵՐԻ

ԲԱԼՄԻ. — Զեր հարցումնելուն պաստասիսանելու պատրաստ եմ, պարոն ներողութիւն կը խնդրիմ ձեզ սպասցնելուս համար, այս անակնկալ տեսակցութեան համար պատրաստուելու պէտք զգացի, լրջութեամբ խորհելու էի:

ՔՕՐ. — Ես ալ այնպէս. կը կարծէի:

ԲԱԼՄԻ. — Ինձի համար շատ զիւրին բան չէ այս խնդրի մասին որոշում տալ, ասոր համար մինակ իմ սուած որոշում չէր բաւեր, միւսին միտքն ալ հասկը նալու պարտաւոր էի:

ՔՕՐ. — Թօղալիային . . . այնպէս չէ:

ԲԱԼՄԻ. — Այս՝ կարեւոր էր առ, ահա մեր որոշումը, մեղաւոր եղող մէկը պէտք է իր կեանքի դնովը քաւէ իր մեղքը...:

ՔՕՐ. — Աս է ձեր որոշումը:

ԲԱԼՄԻ. — Ոչ, ձեր մասին է ըսածս...

ՔՕՐ. — Այդ պարագային՝ ձեր աղջկան վկայականը ցուցնելու շնորհը կ'ընէ՞ք:

ԲԱԼՄԻ. — Բայց դուք անկարելի բան մը կը բնդրէք: Ես աղջիկ չունիմ:

ՔՕՐ. — Դուք աղջիկ չունի՞ք, ուրեմն ո՞վ է այդ աղջիկը:

ԲԱԼՄԻ. — Այն աղջիկը, այդ հրեշտակը, իր առունը էմմա կը կարծէ, ուրիշներ ալ այդ անունով կը ճանչնան զինքը, այդ աղջիկը ձեր Աթան է:

ՔՕՐ. — Իմ աղջիկս Աթան, օ՛հ...

ԲԱԼՄԻ. — Այս՝ ձեր աղջիկն է:

ՔՕՐ. — Հսկէ Աթաս տակաւին կ'ապրի... Ա՛հ, Աստուած իմ, (տողալով) ես տեսայ գայն:

ԲԱԼՄԻ. — Բայց դուք կը գունատիք, կը գողաք:

ՔՕՐ. — Երբեմն ուրախութեան այնպիսի վայրէ ըսել թէ մարդուս մահուանիը պատճառ կ'ըլլան...: Օ՛հ, ես տակաւին կ'ապրիմ, ա՛հ, ես գեղեցիկ, հրեշտականման աղջիկ մը ունիմ եղեր, բայց ի՞նչու համար իր հայրը կը յորջորջէ ձեղ: Ա՛հ դուք չէք պատասխաներ, ես չեմ վափաքիր ատոր պատճառը հասկընալ, միմիայն սաշափը կ'ուղեմ հասկնալ թէ ինձի պիտի վերագարձնէ՞ք աղջիկս, մնացածը ես ձեղի պիտի ներեմ: Այս ձեր թերութիւններուն, ձեր յանցանքներուն պիտի ներեմ, հիմա հրաման ըրէք աղջկանս որպէս անոր քով վութամ, սրտիս վրայ սեղմեմ:

ԲԱԼՄԻ. — Սպասեցէք, բարեկամս, սպասեցէք:

ՔՕՐ. — Աղջիկէս զատ ուրիշ բանի պէտք չունիմ: ԲԱԼՄԻ. — Բայց մտածեցէք անգամ մը... դուք Աթային արժանի է՞ք:

ՔՕՐ. — Եթէ մինչեւ հրմա աղջկանս արժանի չեմ եղած, ասկէ ետքը պիտի ջանամ անոր սիրցնել ինքն զինքս...:

ԲԱԼՄԻ. — Կարելի է...: Քեզի ըսելիքներ ունիմ: Քիչ մը նստեցէ՞ք:

ՔՕՐ. — Խօսեցէք պարոն, խօսեցէք:

ԲԱԼՄԻ. — Զեր զատապարտութիւնէն մէկ քանի ամիս յետոյ ես Թօղալիային հանդիպեցայ, ան աղքատ և թշուառ վիճակի մատնուած էր, անոր վիճակին վրայ արդահատելով, անոր պաշտպան կանգնելու որոշում տուի: Այն ատեն ես ալ կինս և աղջիկս կորսընցընելու զժբախտութիւնը ունեցած էի: Այս իսկ պատճառուած արամած և յուսահատ վիճակ մը ունէի, չէի մտաբերել գարձեալ ամուսնանալ և մտքէս անցընել իսկ ոնրագործութիւն էր, բայց պէտք է խստավանիմ եթէ Թօղալիա աղաս համարձակ եղած ըլլար, կարեռ իր անոր հետ ամուսնանայի: Բայց ձեղի կապուած էր ան, ամուսին մը ունէր: Աթաին նայած պահուս սրտիս և հոգիիս մէջ հրճուանք մը, սէր մը կ'զգայի, որովհետեւ Աթա էմմախս շատ կը նմանէր: Երկուքնիս ալ սկսանք զիրար սիրել իրը հայր ու աղջիկ, ես անոր բնութիւնը, անոր ներքինը ձենէ աղջէկ ուսումնասիրած անմ: Եթէ անակնկալ դէպք մը պատահի անոր ջիղերուն շատ ազգեցութիւն կ'ընէ, այդ մասին չեմ տարակուսիր: Երբեմն անոր երեսը նայած պահուս, ինքնիրենս սա հարցումը կ'ընեմ. Խեղճ անմեղ աղջիկ: Երբ օր մը մեծնալու ըլլաս և չափահաս տարիքդ թեւակոխես ու հօրդ մասին տեղեկութիւն ուզելու ըլլաս, մայրդ ի՞նչ պիտի պատախմանէ: Երբ Թօղալիա ինձի դիմեց ամէնուն կասկածներէն ու բամբասանքներէն աղջկանը պիտիսը վրկելու համար, անոր մաքուր անոն մը պիտի տամ, ըսի... պայմանաւ որ Թօղալիա ալ խոստանայ իր վարքը բարքը շտկել և կանոնաւոր կեանք մը վարել: Ես ալ իմ աղջկանս էմմախս տեղը գնելով զայն, ամբողջ սէրս անոր նուիրեցի: Ահա՛, այդ օրէն ի վեր, Աթա անունը էմմայի վոխուեցաւ, հիմա խօսեցէք, ես յանցաւոր իմ միթէ...:

ՔՕՐ. — Ասոնց բոլորը կը յայտնեն ձեր սրտին բարութիւնը և աղնուութիւնը, սա ալ բացորոշ է որ անկէ գոհողութիւն մը չէք խնդրեր:

ԲԱԼՄԻ. — Այդ գոհողութիւնը ձենէ կ'սպասեմ:

ՔՕՐ. — Ի՞նձմէ՞... բայց դուք չէք զիտեր որ բարիք մը միշտ կը կորսնցնէ իր արժէքը, որովհետեւ դուք ձեր աղջիկը կոչեցիք զայն, իմ իրաւունքս յափշտակեցիք, պարո՞ն, չէի՞ք զիտեր որ վրան դուրս գուրացող ճշմարիտ հայր մը ունէր ան...:

ԲԱԼՄԻ. — Եերող-թիւն, ձեր խօսքերէն բան մը չկրցի հասկնալ, ես, ցիհանս դատապարտեալի մը և զիրեզմանի մը մէջտեղ տարբերութիւն մը չեմ տեսներ: Բօղալիս ստիպուեցաւ իր իրաւունքներէն հրաժարիլ:

ՔՕՐ. — Բօղալիս հրաժարեցա՛ւ, բայց դուք վըստահ եղէք որ իմ բոլոր իրաւունքներէս ես չեմ կենար բնաւ:

ԲԱԼՄԻ. — Պէտք է դուք ալ հրաժարիք... ձեր օգտին համար է որ կ'ըսեմ:

ՔՕՐ. — Ի՞նչո՞ւ, բացայայտօրէն յայտնէցէ՞ք ձեր միտքը...:

ԲԱԼՄԻ. — Շա՛տ լաւ...: Երբ Աթարն քով երթաք, ի հարկէ պիտի ըսէք անոր. «Իբրեւ հայրդ ճանչշած այդ աղնիւ մարդը քու հայրդ չէ... ահա՛ ես քու բուն և օրինաւոր հայրդ եմ, ես սպաննեցի մօրեղ-բայրդ ցկեանս դատապարտուեցայ և առանց ներման արժանանալու գիշերանց խոյս տուի բանաէն: Կը վախնամ որ գարձեալ ձերբակալուիմ, եթէ դուն սարսափէտ մեռնելու ալ ըլլաս... ատոր համար չեմ զգածուիր, միայն թէ հիմա իմ զիրկս եկո՞ւր որ սրտիս վրայ սեղմեմ քեզ և վրադ գուրգուրամ.» Այսպէս կ'ըսէք անոր, այնպէս չէ...:

ՔՕՐ. — Աստուծոյ սիրոյն... լոեցէ՞ք:

ԲԱԼՄԻ. — Այո՛, կը լոեմ, բայց կ'սպասեմ որ ձեր սիրաը, ձեր խիզճը ամէն բան խոսափանի:

ՔՕՐ. — Ա՛հ... զարմանալի բան... դուք կտոր

կտոր ըրիք, իմ սիրաս, հիմա ի՞նչպէս կ'ուզեք որ ամէն բան խոսափանիմ...:

ԲԱԼՄԻ. — Եթէ այսպէս վերջ տանք մեր վիճականութեան, (զրան մօտենալով, Բօղալիսին և Աթարն նշանացի կը հասկցնէ ներս մտնելու համար):

ՔՕՐ. — Բայց ի՞նչ կը նշանակէ աս:

ԲԱԼՄԻ. — Իմ պարտականութիւնս կատարեցի... դուք ալ ձերինը կատարեցէ՞ք, տեսէ՞ք մօրը հետ միասին կուգայ... ուզածնիդ կարող էք ընել:

ՔՕՐ. — Ա՛հ... (երեսը կը գոցէ ձեռքերով)

ԲԱԼՄԻ. — Մէկ խօսքով՝ երկուքն ալ կրնաք փճացընել:

ՔՕՐ. — Ի՞նչ սոսկալի տեսարան, աէր Աստուած. (Բօղալիս և էմման ներս կը մտնեն)

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք, ԲՕԶԱԼԻՍ. և ԷՄՄՈ.

ԷՄՄՈ. — (Քօրրատօն չտեսնելով Բալմիէրին քովը կը վազէ) վերջապէս ձեզ զտայ... սիրելի հայր... առանց քեզի մէկ վայրկեան չեմ կարող անցընել:

ԲԱԼՄԻ. — Ես սա մարդուն հետ պիտի տեսնուիմ, դուք ալ ինծի իրաւունք պիտի տաք: ԷՄՄՈ. — (Քօրրատօն ահանելով) ա՛հ, սա մարդը տակաւին հո՞ս է:

ԲԱԼՄԻ. — Ի՞նչո՞ւ այս մարդէն կը վախնաս:

ԷՄՄՈ. — Շատ կը սոսկամ, այս մարդը ինծի ըսաւ որ քու անունդ էմմա չէ, այլ Աթար է:

ՔՕՐ. — Այն ատեն... (Բօղալիս Քօրրատօնին կը նայի ուշագիր) որովհետեւ.

ԷՄՄՈ. — Որովհետեւ ձեր աղջկան անունը Աթար է եղեր, ամէն տեսած աղջկանդ անունը պէ՞աք է որ Աթար ըլլայ, այս մարդը ուզեց զիս զրկել, կը փափաքի որ հայր կոչեմ զինքը: Ո՛չ, ո՛չ, իմ հայրս դուք եք (Բալմիէրի զայն կը զրկէ)

ԲԱԼՄԻ. — Դուն իմ սենեակս զնա... ես հիմա կուգամ աղջիկս:

ԷՄՄԱ. — Հայր, մի սպասցնէք զիս. (կ'երթայ) ԲԱԼՄԻ. — (Քօրրատօխն) բարեկամս, աղէկ մտածեցէք... սա տեսածնիդ, խօսածնիդ լաւ նկատի առէք (Քալմիէրի կ'երթայ):

ՏԵՍԻԼ Դ.

ԹՕՐԹԱՑՈ, ԱՅՉԱԼԻԱ.

ԱՅՉԱ. — (Քիչ մը լոռթենէ յետոյ) Քօրրատօ, բնաւ իրաւունք չունիս ինձի բան մը ըսելու:

ՔՈՐ. — Զեզի ըսելիք շատ բաներ ունիմ, ևս ոխի և ատելութեան մարմացումն եմ եղեր... ինձի և սըրտիս ձայնին թելազրեց որ լուս մնամ: Մեռած կը կարծէի զայն, բայց տակաւին կ'ապրի, հրեշտակի նման աղջիկ մը... այս աղջիկս է, բայց զիս կ'արհամարհէ ու կ'ատէ, աղջիկս իրեւ հայր ուրիշ մը կը սիրէ... անոր գիրկը կը նետուի և կը գոռէ զայն: Այս՝ այս բոլորը գուն արտօնեցիր, զուն փոխանակ ինձի եղած զրկանքին համար արտասուր թափել սորվեցնելու, զուն փոխանակ Աստուծոյ աղօթել սորվեցնելու... բանարկեալ հօրը աղաւութեանը միջոցներ խորհիլ սորվեցնելու, անոր անմեղ սրտին մէջ ատելու, արհամարհելու սերմեր ցանեցիր: Ասոնք բոլորը օրէնքի հակառակ են:

ԱՅՉԱ. — Եկեղա աղջիկս յափշտակած բաներդ իրեն վերադարձնելու իրաւունքիս մէջ կը կարծէք ինքնքինքս, ահա անկէ յափշտակած բաներուդ մէկն ալ պատուաւոր հօր մը անունը և մականունն էր:

ՔՈՐ. — Պատուաւո՞ր հօր մը. Այս՝, անկարելի է չզարմանալ մինչեւ հիմա ձեր ըրած խայտառակութեան վրայ այսու հանդերձ խելքը ուրիշ կերպ կը զատէ, միրտը ուրիշ կերպ կ'զգայ: Երկար աարիներէ ի վեր իր ընտանիքէն հեռու տառապող հայր մը իր աղջիկէն զրկել, զայն անպատուել, նախատել, կա՞յ այզպիսի բան մը զարերու արձանազրուած պատմութեան մէջ. կա՞յ յատկէ աւելի զէշ բան մը սիսրէի վլայ: Ես ալ քար չեմ, մարդ եմ: Այս՝, քար կարած էի. բայց այժմ արիւնս երակներուս մէջ կ'եռայ, հիմա զարձեալ նաշխանձի որդը սիրտս կը կրծէ, ա՞հ, այս՝, սոսկալի

նախանձ մը... ըսէ՛ տեսնենք, աղջիկս ինձի պիտի յանձնես:

ԱՅՉԱ. — Բայց, զիսե՞ս որ աղջկանդ մահուանք պատճառ պիտի ըլլաս:

ՔՈՐ. — Իմ քաշած ատուապանքներս պիտի պատմեմ անոր: Եթէ խկավէս անմեղ սիրտ մը կը կրէ, ինձի հետեւելով միասին կուգայ: Ես անով է որ արիւնս պիտի հանգարատեցնեմ, խնդրեմ, աղջիկս սրտիս վրայ սեղմեմ, զայն փայտիայեմ, փափաքս առնեմ և յետոյ այտաեղէն փախուստ տամ:

ԱՅՉԱ. — Իրաւունք ունիք... բայց անկէ ետքը ի՞նչ պիտի ըլլայ Աթային վիճակը: Ա՛հ, Քօրրատօ... անկարելի է, ատիկա, մի խնդրէք ինձմէ, զուք ձեր քաշած ատուապանքը և թշուառութիւնը մէջտեղ կը քնէք, ատոնց բոլորը ես ալ կ'զգամ և քաշած եմ, զուք իմ քաշածներս չէք զգար, կ'ուզէք որ իր հայրը զրաւիդ յայտնէք, ևս մայրը չե՞մ միթէ, ևս հայրը ըլլալիդ յայտնէք, ևս մայրը զրկելով, ալ զգացում ունիմ: Ամբողջ իրաւունքներէս զրկելով, իր մայրը ըլլալս չզգացնելով, ուսուցչունի ծածկանունին տակ, այս տունը մտայ, շատ գիշերներ գաղտնապէս, զուքի պէս սրտիս հատորին սենեակը մտնելով՝ անյազօրէն զայն կը զիտեմ, արտասուաթոր աչքերով սենեակէն կը մեկնիմ: Աղջիկդ մինչեւ հիմա իր պաշտամութեանը ներքեւ անովով ուսուցչունիին խօսքերուն անսամ գոնէ: (ծունկի կուգայ)

ՔՈՐ. — Ե՛լ, Ռոզպիա, ոտքի ե՛լ:

ԱՅՉԱ. — Խօսքերս մտիկ ըրէ՛, խնդրեմ Քօրրատօ: Աթակս, թող միշտ էմմա կոչեն, ահա՛ իմ փափաքս: Աթան թո՞ղ այս աղնիւ մարդուն քովը մնայ: Գալով ինձի, ես իհանէ լիս, անտառէ անտառ, ձորէ ձոր քեզի պիտի հետեւիմ:

ՔՈՐ. — Լսել է ինձի հետ գալ կը փափաքիս, այն պէս չէ:

ԱՅՉԱ. — Զեռքերդ բոնով ձեռք մը, արիւնդ զուգացնող չունչ մը պէտք է քեզի, այդ զոհողութիւնը ես պիտի ընեմ:

ՔՕՐ. — Ես արժանի չեմ անոնց :

ՈՒԶԱ. — Խեղճ Քօրրատո, վայրկեան մը անցեալը մոռցիր, մօտեցիր, յոգնած պլուխդ ծունկերուս վրայ հանգչեցուր... եկուր գրկէ զիս... խղճալի ամուսինս :

ՔՕՐ. — (Թօգալիան գրկելով) Թօգալիա, ա՞ն, ի՞նչ երջանկութիւն, Աստուած իմ:

ՈՒԶԱ. — Քեզի ներեցի, Քօրրատո, ամէն յանշանքներդ ներեցի, բայց խոստացիր ինձի: Էմմաէն պիտի հրաժարիս:

ՔՕՐ. — Այո՛, կը խոստանամ, որովհետեւ քեզի գիմազրելու կարողութիւն չունիմ այլեւս. (Ճիշնինո բեմ կուգայ)

ՏԵՍԻԼ Ե.

Նոյն անձերը և Ճիշնին

ՃԻՇՆ. — Ներողութիւն... կարծեմ, ինձի չէիք սպասեր, չուարումի մատնեցի ձեզ, բայց միշտ ժամանակին հասեր եմ. ես ալ կ'ուզեմ ձեր խօսքերուն խառնուիլ, այդպէս կը փափաքիմ:

ՈՒԶԱ. — Դուք մեզի արգելը ըլլալու եկաք, բայց ուշ մեացիք, ամէն ինչ վերջացաւ, մեր որոշումը տուինք, իրարու համակարծիք ենք, այնպէս չէ, Քօրրատո....

ՔՕՐ. — Այո՛, ամէն բան վերջացաւ... (Թօգալիա ստքի կ'ելլէ)

ՃԻՇՆ. — Թօգալիային ներեցիք:

ՔՕՐ. — կը սխալիք մօնսէնեէօր, ընդհակառակը ան ինձի ներեց:

ՃԻՇՆ. — Շա՛տ լաւ, մեղքերու թողութիւն տալը կրօնական իշխանութեանց անկ է, ձեզի արգելը չըլլալու համար, քիչ մը ուշացայ բայց գրանը ետեւէն լուցի որ ասկաւին Աթանիդ կ'ազրի եղեր:

ՔՕՐ. — Այո՛, կ'ազրի, սղջ է, բայց ոչ ինձի համար....

ՃԻՇՆ. — Ի՞նչ ըսել է, դուն անոր հայրը չե՞ս:

ՔՕՐ. — Այո՛, հայրն եմ, բայց անկէ պիտի հրաժարիմ:

ՃԻՇՆ. — Պիտի հրաժարիք, ատիկա անկարելի է զաւակս, ամուսին և հայր եղողները պէտք չէ որ իրենց իրաւունքը կորսնցնեն:

ՔՕՐ. — Բայց երբեմն այնպիսի պարագաներ կան

ուր այդ իրաւունքներէն հրաժարիլ, խելացութիւն է:

ՃԻՇՆ. — Իրաւունք ունիք... բայց ձեր ընտա-

նիքը ձեզի կը պատկանի, չհասկցա՞ր որ այս միջոցին

գիմեցին, ձեզ զատելու համար ձեր զաւկէն: Բժիշկ

գիմեցին, ձեզ զատելու համար ձենէ յափշտակեց,

Բալմիէրին հայրական իրաւունքնիդ ձենէ յափշտակեց,

հիմայ ալ ամուսնութեան իրաւունքդ յափշտակել կ'աշ-

խատի, այնպէս չէ... .

ՔՕՐ. — Ո՛չ, դուք կը ստէք, ձեր վարքին, ձեր

պաշտօնին չի վայլեր տա:

ՃԻՇՆ. — Ես կը ստէմ միթէ:

ՔՕՐ. — Այո՛, կը ստէք, զրանը ետեւէն մեզ մտիկ

ըրիք, ի՞նչպէս, Թօգալիան ինձի հետ չգալը լսեցիք:

ՃԻՇՆ. — Գիտնալ չէ... գուշակութիւն, ուշ կամ

կանուխ ձերբակալուելուդ վատահ ըլլալով՝ ստիպուած

է մերժել ձեզ... .

ՔՕՐ. — Լսեցէք, լսեցէք, աղնիւ սիրտ կրող կին

մը մեղազրէք:

ՃԻՇՆ. — Աղնիւ սիրտ... հըմմ... .

ՔՕՐ. — Այո՛, աղնիւ և անմեղ... .

ՃԻՇՆ. — Ա՛հ, կը ցաւիմ, իրապէս կը ցաւիմ ձեր

վրայ, ոստիկանութեանը ձեզ կը հետապնդէ, եւ ո՞ւր

կանութեան իմացեր է: Հիմակուընէ ձեզի կը յայտարա-

գիմ թէ մեր գուռը այլեւս ձեզի համար զոց է, ի՞նք-

զինքնիդ բախտին յանձնեցէք:

ՔՕՐ. — Դուք մատնեցիք զիս, հոս ըլլալս ոստի-

կանութեան իմաց տուիք: Այո՛, ես ձենէ կասկած ունիմ:

ՃԻՇՆ. — Այս աստիճան լուրջ կասկածներուդ վրայ

կը զարմանամ, ի՞նչպէս կը յանդդնիս այնպիսի զրպար-

տութիւն մը ընել իմ վրաս:

ՔՕՐ. — Մի՛ ուրանաք... ամէն բան հասկցուեցաւ,

զացէք ինձի հետապնդողներուն ըսէք որ ես հոս եմ:

Վարագոյրը կ'իջնէ

ԱՐԱՐ Ե.

ՏԵՍԻԼ Ա.

ՔՕՐՔԱԾՈ, ՌՕԶԱԼԻԱ

ՔՕՐ.— Խօզալիան ինչո՞ւ չերեցաւ, արգեօք վայրը կեաններս համբուած են, ա՞հ, կուզայ ահա'...:

ՌՕԶԱ.— Զիս տեսնել կ'ուզէիք, եկայ, ճամբայ ելլելու տաենը հասած է:

ՔՕՐ.— Ո՞չ, ձեզի խօսելիք քանի մը բաներ ուշ նիմ, անցեալ անգամ միտքս ամփոփ չէր, եկուր թօզալիա, եկո՞ւր քովս նստէ, (Քօզալիա կը նստի) հիմա բացայայտ խօսինք. այդ մարզուն քով ապրած տաենանիդ այդ մարզը սիրեցիք, և կամ ան սիրեց ձեզ:

ՌՕԶԱ.— Խնդրեմ, այդպէս հարցումներ մի ընէք ինձի...:

ՔՕՐ.— Այդ հարցումները ընելու իրաւունք չուշ նիմ, բայց գիտնալու պէտք ունիմ, անգատճառ հաս կընալու եմ: Խնդրեմ, Խօզալիա անկեղծօրէն խոսառ վանցէք ինձի: Այո, ես ալ մեզապարտ եմ, յանցանք ներ ունիմ, ես ձեր ամուսինն եմ, իմ պարտականութիւնս է ձեր յանցանքներուն ներիլ:

ՌՕԶԱ.— Ուզանիդ ընելու իրաւունք ունիք, ամէն բան ձեզի խոսառվաննեցայ.

ՔՕՐ.— Բոլորը չխոսառվաննեցար:

ՌՕԶԱ.— Ամէն բան խօսեցայ, Քօրրատօ, վստահ եղիք:

ՔՕՐ.— Այո', խոսառվաննեցար, բայց ամէնէն կաշ բեւրը մոռցար, երբեմն մշտախոն նստած, իմ մեռնեւ լուս մասին ձեր սրտէն ի՞նչ կանցնէր:

ՌՕԶԱ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

ՔՕՐ.— Այո', հաւկնալ կ'ուզեմ, իմ մեռնելուս չէիր սպասեր: Աստուծմէ չէի՞ր խնդրեր որ ժամ առաջ մեռնիմ:

ՌՕԶԱ.— Կ'երպնում, Քօրրատօ...

ՔՕՐ.— Իմ մահուան զոյժը առած վայրկեանիդ չպիտի փափաքէիք ամուսնանալ բժիշկի Սրբիքօ Բալ միէրիի հետ...:

ՌՕԶԱ.— Քօրրատօ, գէշ մատածումներ են առանք, ինձի հետ այդպէս մի՛ խօսիք:

ՔՕՐ.— Մաքուր սիրա ունեցիք և մի՛ ստեր, ան ինձի ըստ որ եթէ Խօզալիան ամուսին չունենար և կամ մեռած ըլլար, ես անոր հետ կ'ամուսնանայի:

ՌՕԶԱ.— Ի՞նչ կ'ըսէք, Քօրրատօ, հաւատացէք ոչ ես ասաջին անգամն է որ կը բաեմ, ան ալ ձեր բերնէմ:

ՔՕՐ.— Զեզի կը հարցնեմ որ կ'ուզէք անոր աս նունը ձեր անուան կապել և անոր հետ ամուսնանալ: Ոչ թէ իբր ամուսին, այլ իբր բարեկամ խօսեցէք...:

ՌՕԶԱ.— (Գլուխը ծոելով) Այո':

ՔՕՐ.— Այսքանը խոսառվաննելիք յետոյ հիմա ամէն բան ձգելով ինձի հետ գալ կը փափաքիս, այնպէս չէ:

ՌՕԶԱ.— Առաջուց ըսի ձեզ, երթանք, ես պատրաստ եմ...:

ՔՕՐ.— Անկարելի է փափաքի, որովհետեւ պիտի ձերբակալեն զիս:

ՌՕԶԱ.— Ա՞հ, Աստուծ իմ, արգեօք իրա՞ւ է:

ՔՕՐ.— Ենթադրենք թէ իրաւ, քեզ ի՞նչ պիտի ընեն...:

ՌՕԶԱ.— Ես ալ միասին զալով բանտին մօտեր՝ տեղ մը կը բնակիմ. և կամ վանք մը կը մանեմ: Բայց ամէն պարագայի՝ պէտք է ապաս ըլլանք, տակաւին ժամանակ ունինք, զիշերը մօտեցաւ: Երթանք, սիրս կը արոփէ... ալ ասկէ ետքը քեզի հետ ապրիլ կ'ուզէք:

ՔՕՐ.— Ա՞հ, Աստուծ իմ ինչեր կը բաեմ, զուն, զուն... Խօզալիա, զուն տակաւին կը սիրես զիս, ա՞հ, ի՞նչ երջանկութիւն... բայց ես, ես այդ երջանկութիւնը կորսնցուցած եմ:

ՌՕԶԱ.— Այդ երջանկութիւնը դարձեալ պիտի գտնէք, բախտը ձեզի պիտի օգնէ...:

ՔՕՐ.— Անկարելի է... զիս' հիմա պատրաստուէ, որպէսզի խոյս տանք, մինակ ձգէ զիս, ի՞նքնինքս այն-

քան երջանիկ կ'զգամ որ եթէ վայրկեան մը հոս մնաւ
լու ըլլամ, պիտի մեռնիմ:

ՔՕՐ. — Ա՛հ, ուրեմն երթամ պատրաստուիմ,
ֆնաք բարով (ձեռքը սեղմելով կ'երթայ):

ՔՕՐ. — (առանձին) Ես կ'զգամ որ պիտի մեռնիմ.
բայց պարտականութիւնս պիտի կատարեմ, ասիկա
նուիրական պարտականութիւն մըն է, արդեօք մինչեւ
հիմա Ռոզալիա իմ պատճառուս ի՞նչ զրկանքներու են-
թարկուեցաւ: Իմ ինկած լարիւրիւնթուէն Ռոզալիան
ազատող մարդն ալ աղնիւ է, ես զատապարտեալ մը
ըլլալով, եկայ անոնց հանգիստը վրդովելու (կուրծքէն
սրուակ մը հանելով) ասկէց մէկ քանի կաթիլ գործու
լմիցնելու կը բաւէ, անպատճառ ասկէ խմելու եմ:
(ոտքի կ'ելլէ) Բայց աղջիկս, սիրելի Աթաս, անիկա
ինձմէ կը խորչի, կատէ զիս (Եմմա բեմ կուգայ): Ահա
եկաւ, Աստուած հոս զրկեց զայն:

ՏԵՍԻԼ Գ.

ՔՕՐՌԱՏՈ և ԷՄՄԱ

ԷՄՄԱ. — Այս մարդը առկաւին հոս է, (երթալ
կ'ուզէ)

ՔՕՐ. — Ինձմէ մի՛ փախիք, խնդրեմ, քեզի կա-
րեւոր բաներ ունիմ խօսելիք:

ԷՄՄԱ. — Ինձի հետ տեսնուիլ կ'ուզէ՞ք:

ՔՕՐ. — Այո՛, վերջին անգամ ըլլալով տեսնուիլ
կը փախաքիմ:

ԷՄՄԱ. — Ասկէ պիտի մեկնի՞ք....

ՔՕՐ. — Այո՛, վաղն առաւօս կանուխ պիտի մեկ-
նիմ, ձեր ուզածն ալ աս չէ:

ԷՄՄԱ. — Այո՛... որովհետեւ....

ՔՕՐ. — Որովհետեւ ես ձեզի սարսափ կ'ազդեմ,
այնպէս չէ՞՝ բայց հիմա առաջուընէ աւելի փոխուած
չեմ, հիմա աւելի մեղմ չե՞մ. (ծունկի կուգայ):

ԷՄՄԱ. — Բա ո ոտքի ելէք:

ՔՕՐ. — Ոտքի կանգնիլս կ'ուզէ՞ք, բայց ուժու
սպառած է, ձեռքէս բոնիցէք....

ԷՄՄԱ. — (Ձեռքը երկարելով) Ա՛հ, խեղճ մարդ,
(ձեռքին վրայ վերքեր տեսնելով) ձեր ձեռքերուն վէր-
քերը ի՞նչ են... ո՞հ, Աստուած իմ, շղթայի վերքեր
են, (Քօրրատօ կը նստի) դուք զատապարտահա՞լ էք...
ի՞նչու համար... ա՞հ դուք կ'արտասուէք, ես ա՛լ ձենէ
չեմ վախնար, կը ցաւիմ վիճակիդ վրայ, խե՞ղճ մարդ:
Հիմա եթէ Աթան գտնելու ըլլաք, արդեօք ո՞րքան
երջանիկ պիտի զգաք ի՞նքզինքնիդ:

ՔՕՐ. — Ես յոյս կարած եմ անկէ: Ան մեռած է:

ԷՄՄԱ. — (Սրուակը տեսնելով) Ի՞նչ է ատ....

ՔՕՐ. — Ասոր մէջ զեր մը կայ որ զիս պիտի զարմանէ:

ԷՄՄԱ. — Արդեօք կրնամ ծառայութիւն մը մա-
տոցանել ձեզի....

ՔՕՐ. — Ո՛չ, եթէ այդքան աղնուութիւն ունիք,
երեսնիդ գարձուցէք և ինձի համար աղօթեցէք:

ԷՄՄԱ. — Այո՛, ձեզի համար կ'ազօթեմ, [զլուխը
դարձնելով աղօթել կ'սկսի, այդ միջոցին Քօրրատօ սրուա-
կին մէջինը խմելով սեղանին վրայ կը զնէ, և էմմա-
յին կը մօտենայ]:

ՔՕՐ. — Ծնորհակալ եմ աղջիկս, ալ կը բաւէ:

ԷՄՄԱ. — Կը տեսնէք որ ես ալ կ'արտասուեմ:

ՔՕՐ. — Զեղ ամենքնիդ ալ երջանիկ ընելու եկայ:

ԷՄՄԱ. — Հիմա պիտի երթաք, կարծեմ թէ Ռօ-
զալիան ալ միսախն պիտի զայ:

ՔՕՐ. — Զեղի ո՞վ ըստա:

ԷՄՄԱ. — Ոչ ոք, բայց քիչ առաջ զիս զրկեց եւ
արտասուեց, ատկէ կուսէցի:

ՔՕՐ. — Կը սիսալիք, աղջիկս, ան երբեք չպիտի
բաժնուի ձեզմէ:

ԷՄՄԱ. — Եթէ ինձմէ բաժնուի, շատ պիտի յու-
սահատիմ:

ՔՕՐ. — Բայլ է Ռօզալիան կը սիրէք:

ԷՄՄԱ. — Մօրս պէս կը սիրեմ:

ՔՕՐ. — Եթէ մայրդ եղած ըլլար, կ'ուրախանայիր:

ԷՄՄԱ. — Եթէ մայրս եղած ըլլար, շատ երջանիկ
պիտի զգայի ինքզինքս, շատ անգամներ երազիս մէջ
անոնց ամուսնահալը կը տեսնէի:

ՔՕՐ. — [Քիչ մը մտածելէ յետոյ] եթէ ձեր երաւ-
զին մէջ տեսածը ծշմարտութիւնը ըլլար, ի՞նչ կ'ընէք:
ԷՄՄԱ. — [Զարմացկոտ] ի՞նչեր կ'ըսէք, Քօրրատո:
ՔՕՐ. — Մինչեւ հոս գալուս բուն պատճառը այդ
իսկ է, աղջիկս, անարդարութիւն պիտի ըլլայ երկար
ատեն ձեզ անստուգութեան մէջ ձգելը, պարապ տեղը
աշքերնիդ երկինք յասած՝ մայրերնիդ մի՛ փնտոէք,
հոս է ան... ձեր աչքին առջեւը, այս տանը մէջ, ձե-
զի հետ միասին կը գտնուի...
ԷՄՄԱ. — Ռոզալիան...

ՔՕՐ. — Այո՛... սրախս մէջ միծ միսիթարութիւն
կը զգամ, երբ յիշատակի մը լուրը կուտամ ձեզի:
ԷՄՄԱ. — Ռոզալիա իմ մայրս... արդիօք երա՞զ
կը տեսնեմ... եթէ ըսածնիդ իրաւ է շատ չնորհակալ
եմ, բայց ինքը ո՞ւր է... արդիօք մեկնեցաւ ասկէ...
Ռոզալիա, Ռոզալիա:

ՏԵՍԻԼ Գ.

Նոյն անձերը ԲԱԼՄԻԿԻՐԻ և ՈՒԶԱԼԻՄ.

ՈՒԶԱ. — Ի՞նչ կ'ուզէք, էմմա:

ԷՄՄԱ. — Քօրրատոն հոս է [խօսքը Բալմիկի ուզ-
դելով] իր ըսածները ծշմարիտ են, տարակուսանքը
սրտէս հանեցէք. ան կ'ըսէ թէ մայրդ մետած չէ, ողջ
է, [Ռոզալիաի գառնալով] դուք խօսեցէք... դուք էք,
իմ մայրս դուք էք...

ՈՒԶԱ. — [Ճփոթած] ա՞հ...

ԲԱԼՄԻ. — [Քօրրատոյի գառնալով] ի՞նչ դո՞ւք
լուր տուիք...

ՔՕՐ. — Հանդարտեցէք, բարեկամս... բարկու-
թիւննիդ չափաւորեցէք... յայտնեցի թէ Ռոզալիաի
հետ ձեր ունեցած կապը և յարաբերութիւնը օրինաւոր է:

ԲԱԼՄԻ. — Ի՞նչ ըսել է...
ՔՕՐ. — Եթէ զաղանիք մը պարզեցի, ձեր ներու-

դութիւնը կը խնդրեմ. բայց ամէն պարագայի և ստի-
պողաբար իմացնել, պարտք համարեցի: Սակայն եւ
այնպէս Ռոզալիայի հետ ամուսնութեան արգելք ըլլա-
լու պատճառ եղայ:

ՈՒԶԱ. — Ա՞հ, ի՞նչ ըսելու է, Քօրրատո...

ԲԱԼՄԻ. — Ա՞հ, զուք ի՞նչ ըրիք Քօրրատո...

ՔՕՐ. — Հոս տեսածներուս և լսածներուս համար
որոշումն տուի...

ԲԱԼՄԻ. — Բայց ես ձենէ կը վախնամ:

ՔՕՐ. — Վախցէք, բարեկամս վախցէք, (էմմաին
ուղղելով) սիրելի օրինուդ ես ձեզ չարչարեցի, (ձեռքէղ
բռնելով) եկո՛ւր քեզ մօրդ քով տանիմ, ես ալ ձեր
վրայ նայելով միսիթարուիմ...

ԷՄՄԱ. — Տեսած երազներս կ'իրականանան:

ՈՒԶԱ. — (Սոսկումով) ա՞հ, աղջիկս: (Քօրրատո
գեղեւելով ոտքի կ'ելլէ, սեղանին կը մօտենայ ու կը
նստի) Քօրրատո... Քօրրատո...

ԲԱԼՄԻ. — Բայց այս խեղճ մարդը պիտի մեռնի,
(մօտենալով) այո՛, պիտի մեռնի:

ԷՄՄԱ. — Կեցէք, այս սրուակին մէջ գեղ մը կայ,
քիչ առաջ խմեց, հիմա նորէն տանք:

ԲԱԼՄԻ. — (Սրուակին նայելով) ա՞հ, սոսր մէջինը
սոսկալի թոյն մըն է... ա՞հ, այս մարդը ինքզինքը
թունաւորեր է...

ԷՄՄԱ. — Աստուած իմ, օգնութիւն... հասէք:

ՈՒԶԱ. — Օգնութիւն... հասէք... ան չպիտի
մեռնի:

ԲԱԼՄԻ. — Գործը գործէն անցեր է... ամէն բան
լինցեր է...

ՔՕՐ. — Սնկարելի է, (խելայել) խեղճ կին...
աղնիւ պարոն դուք երջանիկ ըլլալու սահմանուած էք,
այդ գոհողութիւնն ալ թո՞զ իմ ձեռքովս ըլլայ:

ՈՒԶԱ. — Ամբողջ յանցանքը իմս է, իմ մէկ խոս-

տովանութիւնս այս խեղճը անձնասպանութեան մղեց :
ԲԱԼՄԻ .— Ինծի համար զոհուեցաւ :

ՔՕՐ .— (Ինքնիրմէ ելած) զիս ձերբակալելու եկեր
են . . . ա՞հ, վատ ոճրագործ, գաղան մարդ, հոգիս մար-
մինէս կը քաղուի, զգայնութիւնս կը կորսուի, ա՞հ . . .
Ա.Թա՛ . . . Ա.Թա՛ . . .

Ո.ԶԱՅ .— (Ինքնիրեն) իր աղջկանը անունը կը
կանչէ . (Էմմային) ան կը կարծէ թէ իր աղջիկն էք .
(մօտենալով) անգամ մը հայր կոչէ զայն, որպէսզի
հանդարտի :

ԷՄՄԱՅ .— (Քօրբատօի կը մօտենայ և ձեռքը ուսին
կը դնէ) հա՛յր . . . հա՛յր, Ա.Թափդ նայէ :

ՔՕՐ .— (Ա.թթննալու պէս) Ա.թա՛ս, Ա.թա՛ս, (կ'ելլէ
էմման կը գրկէ), (Բալմիէրի և Ռօղալիսին աչք կ'ը-
նէ, էմման անոնց կը յանձնէ, և աթոռին վրայ կ'իյ-
նայ) ո՛չ, ո՛չ, դուն Ա.թա՛ն չես, դուն էմման ես, (կը
մեռնի, Ռօղալիս և էմմա զիսկին վրայ իշնալով կ'ար-
տասուեն . . .) :

(Վարագոյրը կ'իջնե)

ՎԵՐՋ

10870
10875

891.71
4-88